



ԱՆԱԿԻՏ
ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՆՍԱԿԱՆ

Դ. ՏՄԸԻ

ԳԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻՒ 12

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբագան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեան խօսակցումին մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չծարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չնդածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԵ

ԲԱՑՈՒԱԾ Է “ԱՆԱՀԻՏ”Ի

Չ Ո Ր Ր Ո Դ

Տ Ա Ր Ե Շ Բ Զ Ա Ն Ծ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆԸ ԿԱՆԻԿ ՊԷՏԻ Է ՎՃԱՐԵԼ

Այն բաժանորդները որ երբորդ տարուան բաժնեգինը չեն վճարած, կը խնդրենք հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզին որ այսուհետեւ շարունակեն ԱՆԱՀԻՏ ստանալ:

ԱԶԴԵՐ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱ Ն ԱՆԱՀԻՏ

ԹԻԻ 1

ԱՆԱԹՈՂ ՅՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶԸ

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԹԱՐԴՄԱՆԵՑ

Ա. Զ.



ԹԻԻ 2

ԱՂՅՐԵՏ ՏԸ ՎԻՅԵՐ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԴՄԱՆԵՑ

Ա. Զ.

Այս գրքիցները զրկուեցան ԱՆԱՀԻՏի բաժանորդներէն անոնց որ երբորդ տարուան բաժնեգին վճարած են, ԱՆԱՀԻՏին բաժանորդ չեղողներ կրնան զայն ընդունիլ՝ ՄԷԿ Ֆրանք զրկելով: Այն բաժանորդները որ պիտի փութան վճարել իրենց անվճար մնացած բաժնեգինները, պիտի ընդունին այս գրքիցները ձրիաբար:

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 12

ՀԱՅ ԷԶԵՐ


— 0 0 —

Հ Ա Ր Ս Ն Ե Ր Գ

ԱՌԱԳՍՍՏԻ ՆԱԽԱԾՆՈՂԱՑ
ՅԵԴԵՄ ԴՐԴԱՐԱՆԻ

Ողբացեալ Ալիշանին — որուն կեանքին ու գրական գործին վրայ յօղուած մը պիտի երեւայ «Անահիտ» ի յաջորդ թիւերէն մէկով, — ամենէն գեղեցիկ էջերէն մէկն է «Հարսներգ»ը, զոր կը հրատարակենք ստորեւ աշխարհաբարի թարգմանուած : «Նուագներ»ու հեղինակին մահուանն առիթով, հայ մամուլն ի վեր հանեց այն կարեւոր տեղը զոր Ալիշանի «Յուշիկներ»ը, «Նահապետի երգեր»ն ու տեղագրական աշխատութիւնները կը բռնեն Հայոց հայրենասիրական գրականութեան մէջ, բայց ոչ ոք չյիշեց թէ երգիչը զոր կորսնցուցինք, իր քրնարին ազգասիրական լարովը միայն չէր որ թանկագին էր մեզի համար, այլ եւ այն զուտ գեղեցկագիտական ամենաբարձր կարողութիւններովը զոր ան ի յայտ էր բերած մէկ քանի քերթուածներու մէջ, որոնք գրաբար լեզուով գրուած, մեր հասարակութեան մեծամասնութեանը անծանօթ, կամ գոնէ անհասկանալի են մնացած: Եւ սակայն եթէ «Նահապետի երգեր»ովն ու «Յուշիկներ»ովն է որ Ալիշան տիրած է հայ ժողովրդին սրտին,

իր մէկ քանի գրաբար քերթուածներուն մէջ է որ անոր բանաստեղծական հանճարը կը բարձրանայ իր ամենէն շքեղ հոլաթեւումներուն: «Հարսներգ»ը, հակառակ մէկ քանի կտորներու ուր եկեղեցականը քիչ մը կ'աւրէ արուեստագէտին մաքրութիւնը, իր բուն ու պայծառ ու ճախրասլաց թռիչովը, հոգեկան խանդավառութեան արբշիտ երկնասաւառումը, կը կազմէ ամէնէն վեհ ու ամենէն ազնիւ գեղեցկագիտական յիշատակարաններէն մին զոր հայ միտքը արտադրած ըլլայ: Եւ կը կարծենք լաւագոյն ծառայութիւնը մատուցանել Ս. Ղազարու անմահ աշխտին յիշատակին՝ մեր հասարակութեան ծանօթացնելով անոր այն երգերէն մին, որ ձեւի խրթնութեանը պատճառով անմատչելի մնացած է իրեն, բայց որ ամենէն աւելի արժանի է անոր հիացմանը մէջ քանդակուելու իբրեւ գրուած մը, ուր մեր պաշտելի Ալիշանը, զոր կը սիրենք ընդհանրապէս իբրեւ «պլպուլը» հայ ցաւերուն, ապացուցած է որ «արծիւ» մըն էր միանգամայն:



Հայաստանեայց քնազաւառի անուշ գրգռանին մէջ, բարձրացի՛ր, բամբի՛ր, անախտակիր տարփանքը երզող, ազատ միջոցին մէջ ազատ հոգւոյ թռիչովը բարձրացիր: Ո՛վ սիրոյ եւ երգերու մշտապաշտօն սարկաւազներ, երաժիշտ հրեշտակներ, օգնեցէք ինձի նուագել

այն աստուածային հուրը որ անձեռագործ առաքատին մէջ կը բորբոքէր մարդկային ազգին նախահայրերը, կենակից կոյսերուն սիրակիզը աղպատանքները, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ, երբ դեռ անէծքն ու յորձանքը երկիրը չէր գերիաձ, երբ դեռ ոչինչ կար սերմնաբոյս, այլ ամէն ինչ՝ աստուածատեղծ, մահկանացուներու տարփանքը եւ անմահներու ժամն ու տեղը:

Հեռո՛ւ մենէ՛՝ երկրաքարչ կրքերու հեթեթանքը, մէկդի՛՝ ոսկի քնարը, մէկդի՛՝ Աստղկորդու յն կապարճը. անարատին մէջ, արատաւոր գաղափար մը թող չի յնայ, եւ անմահներու սիրոյն մահկանացուներու արուեստը թող չըպչի: Եղեմի մէջ պարզուած փէրունական երփնակամար գօտիէն՝ նախաստեղծներուն հարսնիքին փանդեռնը թող կախուի. հըրալար լայնալիճին վրայ հրեշտակներու հաղար ճաճանչներ նախընծայ աղու սիրոյն լարերը թող յարդարեն: Ազամի սէրը երզնք ու սէրը Եւային, երզնք հանդէսը անմահ ու կուսական սիրոյն որ մարդկութեան ծնողքին սիրտը խանդաղատեցուց, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

Ո՛րքան հրաշափառ էր զրախտապատիկ այն իրիկունը, երբ յաւերժութեանց Տէրը, խոհերու խոհին մէջ սուզուելով, կը ճգնէր հաստատել արարչատիպ օրէնքը զուգու թեան, եւ իզու թիւնը հաղորդել բանական բնութեան. իր ձեռակերտն անօտը թմրութեան մը մէջ հանգչեցնելով, կողը կը ճեղքէր եւ անկից կը հանէր աղջիկը՝ Եւան աննման, ամենէն փարելին ու հրաշագեղը. բոլոր կոյսերուն: Ինքը Բարձրեալը կը պարատէր առաջին հարսնիքը, ստեղծելով գործ մը աւելի մեծ քան վեց օրուան հրաշակերտները. ոլորտածաւալ երկրին տաճար ըլլալ կը հրամայէր, եւ ականա կիտ չորս գետերուն հովտին՝ հարսնարան, երկնքին համատարած կապուտակ տաղաւարին խորան, ու աստղերուն սպիտակ կաճառին՝ ջահեր. ինքը փեսաւէր կուգար իր անդրանկին՝ Ազամին, եւ հրեշտակները հարսնածու կը զրկէր աննման կոյսին. Տէրը կ'ելլէր ինչպէս արեւը բիւր բիւր ամպերէն, եւ հրեշտակները ետեւէն՝ ինչպէս ճաճանչներ լուսահիւս. Տէրն իր փառքին մէջ կ'առաջնորդուէր ոսկի գագաթն Արարատին, եւ իր մէկ նայուածքին վրայ՝ զուարթնոց գունդերը շուրջը կը խմբուէին. Տէրը կ'ակնարկէր

իր յաւերժական լուսահիւս բերերովը, եւ երաժիշտները կը յարդարէին իրենց սիրոյ տաւիղը, որով երգեցին լոյսին ծնունդը քանսէն: Օ՛ն, երդե՛նք երկու անմահ կոյսերուն սէրը՝ Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

Հրեշտակները թեւերնուն վրայ առած կը բերեն կոյսը կողահատիկ, նախազգաց զմայլանքին դէմ ամրացնելով անոր դեռաբոյս հոգին, զայն առաջնորդելով դէպ ի ցողածին մարդը վարդավառ, մինչ ան, դեռ ապշած, սրտաբախիկ ու շնչածուփ, ինչպէս աղանեակ մը թեւադողոջ՝ բունիկէն վար ինկած, քաղցր աչուրները չորս բոլորը կը պարտեցնէր Եղեմին մէջ, անձանօթ տեղէ մը այդ անձանօթ վայրը եկած: Զով սիւք մը՝ Ազամը պարուրած՝ անոր քունը կ'օրօրէր, վարդայատակ գարեւանդին վրայ ուր կը հանգչէր, յաւերժական ամենաբոյս համապարմներով յետուած, չորս վտակներու մանուածաւալ մրմունջովը, կոնակն ունենալով մրտենեաց ու մայեկաց խիա թաւուտներ, որոնց մէջ տեղը կը կանգնէր երկայնաւարս ճապուկ ուռին, հովանոցածեւ առաքատին սրսկապանին մէջ:

Հեզ անուրջներէն լուրջ արթնութեան դառնալով, մինչ ցնդած տեսիլքովը դեռ հիացած կը մնար եւ իր կողին բացմանը դէպքին վրայ միտքը վարանոտ, սրտին զրդամմբն արեգակնալիր աչքերը վերցնելով ուռենեաց ոտներուն բացխփիկ ժապաւեններուն մէջէն՝ կը նշմարէր փայլակնանման լոյսը յանկարծացայտ. յետոյ՝ վարսաւոր հովանոցեակը կէս բանալով, աչքին կը զարնէր կողաբոյս կիւնն անդրանիկ, կուսական Եւան, համակ գեղադէշ, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ: Ոչ մէկ մահկանացու ու ոչ մէկ անմահ չտեսաւ անոր նման խառնուրդ մը շնորհիւ անմեղութեան եւ փափկութեան: Ոստերը քիչ մը հարթելով, Եւա Ազամը կը տեսնէր, Ազամը՝ նախատիպն արութեան, հայրն հասարակաց ու երկուքին նայուածքն իրարու կը դպչէր... Ո՛վ հրամանուած հանգոյց՝ հոգիները պարաւանդող:

Մարդկութեան հայրը, աստուածաշունչ բուցով պատած, հովանաւոր հանգստարանին մէջ՝ ոտքը գամուած գետնին, եւ հրաշացած՝ աչքը զարմանազան օրիորդին վրայ պիչ, սա գուշակաւոր առաջին խօսքերը կ'արտասանէր. Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

«Ասի ահա ոսկոր է իմ ոսկորէս, մարմին իմ մարմնէս, ասի պիտի կոչուի այրածին՝ վասն զի այրէն ծնաւ, ասի կենակից պիտի ըլլայ ինծի յաւիտեան. ասոր հետ զուգուելով՝ մենէ պիտի արձակուի մարդկային ազգը. եւ անոնք որ մենէ պիտի սերին, այլեւս պիտի թողուն՝ ուստրն իր հայրն ու մայրը եւ այրածնին ետեւէն երթայ, ու զուստրն իր ծնողքէն զատուելով այլին հետ պիտի ապրի. երկուքն իրարու մօտենալով մէկ մարմին պիտի կազմեն. այս է խօսքն ու դաշինքը՝ Աստուծոյ եւ Ադամայ միջեւ : »

Վարդեւոր դարեւանդին սեմին վրայ կայնած՝ այսպէս կը խօսէր առաջին մարդը, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ, ձեռքերը երկինք վերուցած, աչքը զարմանազան օրիորդին. եւ իր հրահատ շունչը օրիորդը կը վառէր. եւ հրեշտակները կը հրաշանային, ու Վեհը կը հաճէր : Իսկ մարդը, նախասնունդ աւիւնով մը յորդագեղ, անձին մէջ նոր կեանք մը զգալով՝ դուրս կը ցատքէր վարսաշարժ հովանոցէն դէպ ի կոյսը գեղավարս : Բազուկները բանալով ինչպէս որ բընութիւնն անոր սօրվեցուց : Դեռ իրարու չհասած, թեւերնին իրարու կը կարկառէին, ու բախութեանու սիրոյ մէջ տարուբեր՝ մերթ իրարու կը փարին, մերթ դէմ առ դէմ, գմայլած, անշարժ կը կենան՝ ինչպէս վարդը շունչն քով, — համակ չքնաղ, ամէն կերպով իրարու պատշաճ : Ձեռք ձեռքի կպած, իրարու նայեցան, ու ոչինչ տեսան. Աստուած միայն իրենց մտքին մէջ, ու միայն իրենք՝ բնութեան մէջ... : Ո՛վ անախտ սրտերու գրկածութիւնն առաջին, ո՛վ առաջին շարժագեղ շրթունքներն համբուրածին, ու խայտանքնե՛րը սիրաւէտ սուր սուրբ աչքերուն որ անմեղունակ անտխեղձ դեղեցկութիւնը կը դիտեն, աստուածաշուք շնորհքին հովանոցն ներքեւ : Հրեղէններն անգամ ահնահաճոյ զարմանքով կը տեսնեն գողտր Եւան սր կուածոյ վիզը կանգնելով, իր զուգահասակ կենակիցը կը գտնէր, եւ Ադամը որ անոր համասփիւռ դեղձան խոպոպները բարձրիկ ճակտին վրայ մատներովը տրոհելով, համբուրած տեղերը վարդագոյն հեռքեր կը թողուր, արուսեակէն աւելի առատ անոր մեղուակն աչքերուն կը պչնուր, կը պչնուր անոր զուարթ կարակնակամար յօնքերուն հիւսքին, ամբողջ դէմքին վրայ մանր ծիծաղին ելեւէջին կը

պչնուր. իսկ Եւա ոչ նուազ կը սխրանար Ադամին վրայ, երկուքն ալ նոյնքան զարմանքի ու հաճոյքի մէջ ընկղմած :

Անմեղ իղձերու առաջնաճաշակ գոհացումէն յետոյ, շրթունքնին խօսելու կուտային, ոտքերնին՝ խաղալու. կոյսին փափկիկ բազուկն իր հաստոյր թեւին անցընելով, Ադամ կը դիմէր դէպ ի ծառն. անմահուղէշ, կեանքի աստուածագիր պատուէրը սորվեցնելով. քիմքը կը կրթէր ամենահամ պողովը, եւ անթառամ ստի մը վրայ համախառնելով ընտրելագոյն ծաղիկները՝ անոր վարսանաղիկ գլխուն շուրջը կը բոլորէր ու կը ժպտէր, գգուելի դէմքին անուշակ շիկնութիւն մը աւելցնելով :

Դրախտին հեշտաճեմ շաւիղներուն մէջէն ման գալով, իր երանութեան երկայն սահմանները կը նշանակէր Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ, եւ բնութիւնները կենդանիներուն որ իրեն կը հնազանդէին, ամենագոյններն իսկ ի սպաս կոչելով իր հեզ տիկնոջը, գահաւորակ՝ բլրածեւ փիղը վիթխարի, ասպաստանիկ՝ ահեղամուռնչ առիւծը հերապանծ, եւ անդրուվար խրխնջախրոխաձին ճախրասլաց, հովանեակ՝ վարագաթեւ արծիւն արեւադէտ, յառաջընթացիկ՝ գեղափետուր թռչնոց երամները, քաղցրաճայն մունետիկ՝ բարձրաբնակ ճանձկէն ճնճղուկները, եւ հետեւակ՝ սիրամարդը, փասեանը եւ զրախտահաւն, ու լիճերու կապուտակ մկանունքներու վրայ պարզուած մակոյկներ՝ զուգառագաստ պաղպաջուն թիկունքով ձիւնփայլ կարապները, եւ քծնատու՝ գառները, սկունդներն ու աղաւնեակները. ու այդ բոլորին հետ՝ կարճ պտոյտ մը ընելէ յետոյ, անգամ մը չարին գիտութեան ծառն անոր ցոյց կուտար, ու կռնակը դարձընելով ձեպընթացիկ կը փախչէր. Եւան, չարին ու մահուան անունէն պահ մը քստմիած, շուտով կրկին երկնապարզիկ զուարթութեանը կը դառնար, ու երկուքը միասին, նորէն վարդերու դարեւանը կուգային, կենդանիներուն ջոկերը իւրաքանչիւրն իր կայքն արձակելով, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ :

Իսկ մինչդեռ տուրնջեան երկնապար իշխանը արփենի ժամերովը վեցերորդ օրը համառօտելով հրավարս ծամերն ամփոփած արեւմուտք կը սահէր, խաղաղ բնութիւնը խաղաղագոյն կը դառնար. խարտեաշ մահիկն ոսկեկումբ Արարատին վրայ կը թաւալէր, գիշերին նրբա-

Թաղանթ քողը տարածելով, սեւը կուպոյտին, բեհեզը ծիրանիին խառնուած, որուն մէջէն լուսակարկաջ բոյլերուն երամները բեկբեկուն, ամէն մէկն իր պատշգամէն փայլիփայլ վար նայելով, ջուրերու նարմանազուկ օրրանին մէջ լուսեղէն մազեր կը սփռէին, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ: Լեռներէն, հովիտներէն, անտառածիր ծմակներէն ու մարգերէն, գիշերային հեղամնչիկ սիւքը սաւառնելով կը հնչէր՝ եղեմական սիրային օդին մէջէն անցնելով. մանրակոտոր մեղմաշարժ ալեակները կը մըրմընջէին. ուս ուսի կը կքէին ու կը կանգնէին փափկամէջք պուրակները. կը հեղանար սօսիւնը սաղարթաշարժ ծառաստանին, կը հեղանար խունկերու խոնաւաթեւ բուրումն օդին մէջ, կը հեղանար ձայնը գիշերուան հեշտախօս թռչունին, ժայռերու արձագանքներուն գեղ գեղ հոլովմամբն եթերին մէջ՝ սիրոյ հառաչներ արձակել տալով համատարած բնութեան: Սահանքին ձայնը հեռուէն կը հեծէր խոր անձաւներէն. ժամը հանդարտիկ էր, հծծանքները մեղմ, լուսթիւնը ախորժ. կը հանգչէր երկիրը, կը հանգչէր երկինքը, եւ ամէն բան կը հանգչէր:

Տէրն ալ վեց օրուան հրաշակերտութիւններովը շատացած, դէպ ի յաւերժական խոր հանգիստը կը շտապէր, կամենալով ձեզ հանգչեցնել, ո՛վ երկեակ, որ յանգէտս՝ տիրայարդար առագաստին սեւին վրայ՝ մին միւսին ուսին կրթնած, հրաշացած կը նայէիք աստեղատանց շողչող կաճառներուն, իրզախ թռիչներուն, մինչեւ որ խարտեաշ մահիկը բարձրանալով ձեր դէմքին կը ցոլար, ձեր շուրջն անձայն պտրտցնելով ծառերուն պատկերները, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

Այն ատեն ոսկեգագաթ Արարատին կատարէն, Բարձրեալն իր հրահոս բիբերով հրաբուն զօրքերուն ազդելով, մարդկային սեռի առաջին հարսնիքին հրամանը կ'արձակէր: Ինչպէս գիւղէ մը բարձրացող ծուխ մը ծայրակարմիր հողմածածան, վերացած կը շարժէր բոլոր բանակն երգայարդար, անտեսարար շրջապատելով Վարդից բլուրը կուգար կը յառաջանար գիշերսպահ քնքուշ հրեշտակիկը, կենսաձիր ոստովը Եղեմի շուրջը հովանիւնով, եւ կոյս ամուսիններն առագաստը կը հրաւիրէր, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

Ազամ հոն կը մտնէր՝ Եւայի ձեռքէն բռնած, եւ աստղերը յորդալոյս փայլ մը հեղլով շեփարներուն մէջէն, խորշխորշեայ սաղարթածեղուն հովանոցին մէջ, հիացած կը նայէին քրքմաւէտ հանգստարանին, ուռիին եզերքը բարձր ու կակուղ թերթերով սփռուած, ինչպէս սիրոյ սեղան մը երկրիս մէջտեղը վերամբարձիկ:

Եւ մինչ հազիւ քունի բաղձանքը կը փարէր անոնց՝ գիշերապահ հրեշտակին հովածուկ բարամուկքէն, ոսկեգագաթ Արարատէն սաւտոնաթեւելով կ'ամբառնար կուգար Աստուածութիւնն ամենատարած, ինչպէս բուրգ եռահրաշ՝ սրակապանին վերեւը կը կանգնէր, անձառ խորհուրդ մը յայտնելու մեր նախածնողքին. փափկիկ կոյսին դաստակը բռնելով Ազամի ձեռքին մէջ կը դնէր. եւ իր դաստակերտին աջը Եւայինին կցելով, կենսաձիր ծառէն ընձիւղ մը մէջը կը յեռուր, ու անմահավայել սիրոր հանդէսը կ'ուսուցանէր, եւ կուսական զուգութիւնը՝ մահկանացուներուս անըմբռնիլ. եւ համաստեղծ աջը վերցնելով, կ'օրհնէր ու կը կնքէր, անոնց դէմքին վրայ կրկին փչելով անմահութեան շունչը, որմէ կը սրտփէ շունչի կենսականութիւնը մարդոց մէջ եւ պիտի տրտփէ ցորչափ երկիրս անոնց տունը մնայ, եւ անոնց վերեւ ցողապին խանդաղատանքներ սփռելով՝ այդ եռանդազին բոցով մը տոշորած վայրերէն կը հեռանար. եւ բոսոր ծուխը՝ շամանդաղելով շողակէզ, սիրալիր սեղանէն սլաց առ սլաց ցոլացած, կը ստեղնանար կ'երթար կցուիլ աստղավար երկինքին: Ինք՝ Տէրը, ծուխին, բոցին, սիրոյն մէջէն ելլելով կը նազէր, հրահոս աչքերով հարսնարանը դիտելով. եւ հոգեղէն խմբին կը հրամայէր սիրոյ երգը նուագել, Հայաստանեայց բնագաւառի անուշ գրգարանին մէջ:

Այն ատեն Սերուրը սէրօբնէրուն մէջէն սաւառնելով կուգար, հրաթերթեան թեւերը կը պարզէր ու կը յառաջանար, տիեզերադուր հրաթեւ փանդեռնը լարելով, եւ վարդազարդ բլրակին հանդէպ արձանացած, երկնահեծան աղեբախովը մեծ զոնչիւն մը կ'արձակէր. փանդոսն զոնչիւն՝ երկինք ու երկիր կը թընդային, եւ համօրէն բնութիւնը սէ՛րը կը փառաբանէր. երեք, չորս անգամ հրեշտակապետք սէրը հնչեցուց. եւ հոգեղէն շունչը չէր բաւեր անոր, մինչեւ որ հրեղէններու պարը ամբողջութեամբ միաձայն հազիւ կրցան սիրոյ ա-

մենաբաւ անուանը վերցնել , նոյն ինքն սիրոյ յարաշարժ ակունքէն խրատոյս ընդունելով . վասն զի եթէ սէրը բնութեան հետ հաշտ ըրած չըլլար Ան , բնութիւնը լափլէզ սպառուածով ոչէութեան վիճը կ'ընկրկէր , առանց Անոր չկայ սիրոյ ձայն , չկայ սիրոյ կերթ .

«Աէ'ր» , բարձրաձայն բուռն կ'որոտար փանգեանահարը . եւ Սէր կը կրկնէին հոգիա- նիւթնէրը միաբարբառ , Հայաստանեայց բը- նագաւառի անուշ գրգարանին մէջ . «Աէ'ր , մեծ է սէրը , ամէն ինչ որ կայ լի է սիրով . ամենուրեք է սէրը , եւ թաքուն կը մնայ ամե- նէն , երկինքը վայն չի ճանչնար , եւ անյայտ է ան երկրիս . եղանութեանց համօրէն նիւ- թերը մէջտեղ դալով՝ սիրոյ հնոցէն կայծ մը չեն կրնար մտրել . իմաստութիւնը , նայն իսկ եթէ յաւիտեան հալածէ զայն , սիրախաղաց գարշապարին չի կրնար հասնիլ . զգայու- թիւններն ստուերական են , սէրն է միայն ի- րական . Սէ'ր , դուն միայն ես էութիւն , դուն կեանքն ապրողներուն . եղածն ու չեղածը ա- փիղ մէջ ունիս , ո՛վ համբիշխան , միահեծան լծակ՝ տիեզերքը վեր բռնող : Առանց քեզի տեղ չկայ , քննէ անդին սահման չկայ . եռադիմակ աստուածութեան դուն միակ կայանք , եւ դուն միայն անչափին չափն անչափական . էական- րուն էակը՝ անհուն յաւերժական ժամանակնե- րուն ծոցը՝ անհղահրաչ զօրութիւնները քու մէջդ անդրուվարելով , քու բնութեանդ ըն- դարձակութեանը մէջ կը քայլէր ժուռ կուզար , ո՛վ ինքնաշարժ գահոյք , ո՛վ գնացք յաւերժ- ընթաց , ո՛վ սէր՝ ամէն բան , սէր՝ համակ աստուածութիւն :

«Արարածներուն պէտք չունէիր , քեզի ոչինչ կը պակսէր . եղանակներու գումարումը քու վրադ ոչինչ աւելցուց , վասն զի ծածկուածները քու անծին ծոցէդ ելան յայտնուեցան , երբ յաւիտենականութեան միապաղաղ ծովը յու- ղելով ու մշտամուսյլ վիճերու գէպ ի խորա- փունքը կաքկառելով , դուն որ ի սկզբանէ ոչէութեան հետ կ'որոտէիր , հաճութեանց ներգործական կամքը սաստկացուցիր , եւ տիեզերքին տարրը անէութեանէն որսացիր . անչափ ժամանակը չափով մը ընդմիջելով , հրամայեցիր գիտակցութեան որ գործօն դառնայ . քու կամքիդ ազդումովը՝ ծնունդ առաւ ամէն ինչ որ կայ . յաւիտենականութեան ծոցէն ժամանակը մեզի համար խզուեցաւ , զլուխն իբր թագ դնելով էականներուն անդրանի

կը՝ լոյսը պայծառ , անօսրագոյնն այն քողերուն որ քեզ կը պատեն :

« Սէր՝ , դուն ակնթարթով մը համածիր հաստատութիւնը չափելով , մղեղի պէս սեր- մանեցիր վախկոտ աշխարհները . ամէն մէկուն տալով այլազան կեանք եւ օրէնք , եւ միա- համուռ դաշնակելով մէկ կանոնի մէջ , զոր դուն միայն դիտես , կը լսես , կը վարես ու կը հաճիս . դուն նաեւ մեզ քու հոգիէդ արտակիրտեցիր , քու բնութեանդ մշտեանդ հուրը մեզի փոխանցելով , եւ անմահական գահուդ վրայէն՝ օրհնութեանց քարոզ եղար :

Դուն բազմաբիւր լուսաշխարհներէն նախ- ընտրելով այս հողազանգուած գունտը մարդնկալուչ , կամքիդ վեցեակ ակնար- կութեամբը զայն հրաշազան ստեղծեցիր , դուն ծովուն ծիրը երկրի շուրջը փաթթեցիր՝ դօտի մշտապտոյտ . թուլատարր օդով վերնա- յին գաւառները լեցուցիր , եւ հողուն երեսը բուսական փաղփուռ բնութեամբ ծածկեցիր . բարձր լեռներէն ջրաբոյծ կեանք մը մատուա- կեցիր , երկայնալի գետեր երկրի երակներուն մէջ խայտացնելով . քրքրուող հողը լլկիչ դրիւ սանդարամտին ամհամուղ անդնդաշարժ հրանուտ յորձանքին , եւ աւազը՝ խեթկիչ ով- կիւնու ապատակներուն , վրնջանժոյզ փըր- փրաբաշխաթ կոհակներուն , որպէս զի հուրն ու ջուրը՝ վակժոյժ՝ քու զանդանաւանդ պաշ- տեն : Յետոյ , նիւթախառն կենդանութեանց յառաջանալով , զեռուններուն ջոլերնէրը եռա- ցուցիր ջուրէն ու հողէն , օդախաղաց , ալեղու- ղակ , ցամաքակոխ , ձայներնուն , խաղեր- նուն , կայանքներնուն մէջ քեզ թարգմանելով :

«Իսկ այսքան հրաշքներէ յետոյ , եւ այդ բոլորին իբր պսակ , քու գերարուեստդ կա- ոուցիր՝ մարդը ձեռակերտ , հանուր տարրերէն մանրակրկիտ ձուլելով մարմին , անոր մէջ քոյակերպ հոգի արտափչեցիր , երկրիս ու եր- կնքի կրկին դէմքն անոր վրայ առբերելով . այս դրախտն անոր համար ճարտարապետելով՝ դուն փափկութեան , իղձերուն օճան հայթայ- թեցիր՝ իրմէն իսկ՝ էգը բանական , կոյս կողա- ուրի , արպար քու շնորհիդ . եւ ասոնցմէ յառաջ բերելու համար նմանօրինակ սերունդ մը , այժմ կ'առադրես հրաշալի խօրհուրդը զուգու- թեան , խորհուրդը քու տարփանքիդ , որով ոչնչէն ամէն բան ստեղծեցիր , եւ աջովդ ա- սոնք կնքելով՝ հաշտ կ'ակնարկես :

«Ո՛վ Տէր յաւերժական , որ յաւերժատիպ սէրն այստեղ կը ծնիս , ահեղ զօրութիւնդ արի

Աղամին մէջ տպաւորելով, փարելի բնութեանդ բերումը կակուղ Եւային մէջ, եւ երկուքին ալ մէջ՝ արգասաբեր կամքիդ փափաքը : Ո՛վ զուգութիւն աստուածաշործ եւ աստուածակերպ • լուծ երկակի՝ միշտ երբեակին առաջնորդող, նման հրեղէն բոցին՝ ազամանդեայ օդին մէջ, արփենի՛ն իռութեանց՝ ծիածան ծփանքներուն վրայ ծովերուն, երկին յլորտներուն՝ որ երկրի ծիրը կը համբուրեն, երկու ճաճանչներու՝ որ այգուն ու գիշերին մէջտեղը կը ցոլան եւ նոյն նարոտով կը կապեն անբաժան երանգն ու բոյրը : Ո՛վ անմահութիւն անախտաբար մարմնախառնուած, ո՛վ ամուսիններ՝ կոյս հրեշտակներէն շատ քիչ կրտսեր : Երկուքդ իրարու միանալով, անձը կը լրացնէք, զուք որոնց համար չկայ իրարմէ ուրիշ ոչինչ, որ ուրիշ եւ մըն էք միմեանց ձամար . յաւերժական հոգին՝ ձեր մէջ թափուած՝ պիտի յառաջ խաղայ . ուստիբ պիտի ծնին Աղամի նման, զուստրեր նման Եւայի . Աղամ պիտի ըլլայ հայր ու Եւա մայր ընդհանուր : Երանի՛ քեզի, մարդկային ազգ, որ այս կերպով կը սկզբնաւորուիս . երանի՛ ձեզի, ո՛վ առաջին զուգահրաշ սիրակցորդք, որ մեծատոհմ մարդկութեան ծայրը կը կազմէք : Ուրա՛խ եղիր, կոյս փեսայ . ուրա՛խ եղիր՝ կոյս հարսնուհի . թող քաղցրանայ ձեր քունը, թող քաղցրանա՛ն ձեզի՛ երազները երկնրեծայ :

«Օ՛ն, սպաւորեցէք ձեր ախրոջը, ամէն ինչ որ կաք երկրի վրայ • ելի՛ր, սէ՛ր, երեւցիր քու ստեղծած արարածներուդ . գիշերուան ոգիներ, Աղամի դէմքը համբուրեցէք, զեփիւռներ, մեղոյշ Եւայի խոպոզներն ի վար շնչեցէք . թող ծաղիկներն անուշ բուրումներ բուրեն հարսնարանին մէջ . արթնական թռչուններ, սիրոյ դայլայլներ արձակեցէք . խօսեցէք, սիրակարկաջ առուակներ եւ աղբիւրներ, լեռներու արձագանքներ, սիրոյ վանկը հնչեցուցէք . սիրով բորբոքեցէք, խոժոռագեղ ապառաժներ . հեռուէն սիրով հառաչէ՛, ծո՛վ ալեշատ . արի առիւծներ, անտառներէն սէր մոնչեցէք . հնչէ՛, մի՛ լսեր, օդ համասփիւռ, սէ՛րը հնչէ . երկի՛նք՝ սէրը, երկի՛ր՝ սէրը, սէրը՝ ո՛վ բնութիւն, բոլոր արարածներ, միաբարբառ՝ սէ՛րը հնչեցէք . . . » :

Եւ սէրը հրդեհելով կը բոցածխէր աննիւթ հազազը : Խրոխտ Սերուբը, երգեցիկ լայնալիճը

ուսին վրայ դնելով, իր պարակիցներուն հետ Յաւերժին ոտքը կ'իյնար խոնջ, Հայաստանեայց բնագաւառի անուշ զրգարանին մէջ, եւ գիշերուան պտնը վեցերորդ օրը կը լրացնէր : Իսկ անժամանակն Աստուած, սիրոյ գովեստին ժպտելով, եւ գոհ ըլլալով բոլոր արարչութեանէն՝ վասն զի բարի էր, «Օրհնեա՛լ եղիք, ըսաւ, եւ անելով բազմայէք, եւ մեր աստուածային սէրը թող ձեր մէջն ըլլայ » : Եւ հրահոս բիբերովն ամէն կողմ ակնարկելով, գերովկիական սիրաթաթաւ տարափներ կը հեղուր, եւ համօրէն բնութիւնն արբեցած կ'ուռճանար, եւ հրաշքներուն իբր աւարտ մարդուն հարսնիքը դնելով, Հայաստանեայց բնագաւառի անուշ զրգարանին մէջ, վերնականներուն հոյերը թեւերուն վրայ կ'առնէր, եւ առաջաստին ծուխին ծայրէն կ'ելլէր կը սլանար, երկնքէ երկինք ամբառնալով՝ մինչեւ հոն ուր էակները մուտք չունին, անսկիզբ, անմէջ, անվերջ սիրոյ մէջ կը հանգչէր :

Երկինքը հեծեց, երկիրը թնդաց, վիհերը հառաչեցին, եւ տիեզերքի բոլոր աղխերը դըրդեցան արարչագործ ու մշտնջենական սէրը վերօրհնելով : Սիրոյ օրհնութեամբ ճոնչալով սարսեցաւ սուրբ սրսկապանը . ծիրանեփայլ աչուռնին քացին սիրաքուն ամուլները, օրհնեցին Տէրը որ քուն ու սէր կը շնչէ մարդուն եւ երկուքն ալ ծանրացած աչքերնին նորէն փակեցին, խաղաղական պահը սպառելու համար անբիծ անդորրութեան մէջ :

Եւ լուսնին լոյսը կէս գիշերին կը փարէր . եւ խարտեաշ մահիկն առաջաստին գմբէթը կը կենար . եւ թռչունին ձայնը կենաց ծառին մէջ կը նուաղէր . եւ հաղ ընդ հաղ կը հառաչէր հեղեղը հեռաւոր, եւ հազիւ մեղմ օդի հծծիւն մը միջոցը կը դրդէր . եւ ընութիւնը կը հանդչէր համատարած խոր անդորրութեան մէջ . եւ գիշերապան հրեշտակն անձայն կը ձեմէր Եգեմն ի վար, կենսատուին բարսմունքովը հով անելով չուրջանակի . եւ քողցր քունը ստուերներու անձոխնչ լարին վրայ կ'որորուէր . եւ հանդիսան ու սէրը կատարեալ էր անմահ մարդերուն՝ հովանոցածեւ առաջաստին մորճ ստեղներուն տակ, որոնց ներքեւ կը ննջէր կոյս սիրոյն քունը կուսական, Հայաստանեայց բնագաւառի անուշ զրգարանին մէջ :

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ԱՐՈՒԵՍՏԻ ԷԶԵՐ



Յունաստանը ողբւար

Միսոլոնկիի աւերակներուն վրայ (Պորսոյի թանգարան)

Յոյներուն ողորումը Տաճկին լուծէն ազատելու համար՝ խանդավառեց, ժժ զարու
 առաջին կէսին մէջ, Ներսիսի բոլոր ազնիւ մտքերը. Պայրըններն ու Հիւկոները իրենց քը-
 նարին ամենէն հզօր հնչիւնները նուիրեցին յունական դատին. Տըլաքրուա, Հիւկոյի եղբայ-
 րը նկարչութեան մէջ, իր ներկայական ի սպաս դրաւ անոր, եւ արտադրեց մէկ քանի գը-
 լուխ-գործոցներ, որոնց մին՝ Բիոսիկոտորածը՝ Լուվրի թանգարանը կը գտնուի: Այն պատկերը,
 որուն վերտագրութիւնը կը հրատարակենք, կը ներկայացնէ Յունաստանը, աւերակներու մէջ,
 մահամերձ, օգնութիւն հայցող թեւերը բացած, բայց միշտ գեղեցիկ ու խրոխտ, իր ետեւն ունե-
 նա՛ով Տաճկին մօայլ ու չարագուշակ ուրուականը՝ սպառնականօրէն ցցուած:

ԽԱՋ-ՓՈՒՇ

ՊԱՏԿԵՐ ՊԱՐՍԻԿ ԽԵՂՃԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

—o—

(քարգնեսնուած արեւելեան հայերենի)

Գ .

Անձիւն , դառնաշունչ ձմեռին յաջորդեց անանձրեւ գարունը , յետոյ երաշտ ամառը . ձմեռը՝ չոր ցուրաբ ցանքերը ոչնչացուց , իսկ ամառը՝ չոր սոթը : Ժողովուրդը սարսափով կը նկատէր երաշտութիւնը , մանաւանդ երբ կը տեսնէր որ կենսական մթերքները օրըստօրէ կը սուղնային :

Սովը անխուսափելի կը դառնար :

Շուկային մէջ քանի մը օրէ ի վեր մարդ չէր երեւնար :

Մարդիկ դրամը ձեռքերնին ման կուգային եւ հաց չէին գտներ : Կառավարութիւնը ամէն խստութիւն ի գործ կը դնէր որպէսզի առատութիւնը վերականգնէ . օր չէր անցներ որ մէկ քանի հացթուխներ ականջներնէն գամուած չըլլային իրենց խանութներուն առջեւ սիւներու վրայ (1) : Օր չէր անցներ որ մէկ քանի ալիւր ծախողներու քթէն , զալմուխի ուղտի նման թակ անցուցած չըլլային եւ չպաշտօնէին փողոցներէն՝ ի ցոյց այլոց (2) :

Արդէն մարդիկ սկսած էին բանջարներով եւ արմատներով կերակրուիլ եւ մէկ քանի օրառաջ , փողոցներուն մէջ գտած էին սովամահներու դիակներ :

Բայց Շահին իւրաքանչիւր հարցումներուն թէ ի՞նչ գրութեան մէջ է սովը , մեծ վեզերը սովորաբար կը պատասխանէր . «Գոհութիւն Աստուծոյ , այժմ կատարեալ լիութիւն կը տիրէ . . . փոքր ինչ սղութիւն տեղի ունեցաւ , ան ալ անցաւ» :

(1) Հացթուխներու սովորական պատիժն է այդ երբ անոնք ո եւ է անկարգութիւն մը կ'ընեն : Անոնց անանջը կը գամեն փայտէ սիւնի մը , եւ այնպէս կանգնած քանի մը օր կը պահեն իրենց խանութին առջեւ , որպէսզի զգան թէ ինչ քան է անոթութիւնը :

(2) Այսպէս կը պատժեն նաեւ մանր գողերը . քթէն բարակ թուկ մը կ'անցընեն եւ չափձը թուկի ծայրէն բռնած բոլոր շուկան եւ փողոցները կը պաշտօնէ գային :

Կը գրուցուէր թէ կենսական մթերքները այնքան պակաս չեն որ սովը այն աստիճան սաստկութեան հասնէր : Կը գրուցուէր նաեւ թէ հարուստ հաճիներու մօտ նախորդ տարիներէն մնացած այնքան ցորեն ու ալիւր կայ որ բաւական էին ժողովուրդը գոհացնելու , բայց հաճիները կը ծածկէին՝ որպէս զի աւելի սուղ գնով ծախէին : Արդէն հաճի Թախմի ամբարները այդպիսի խօսակցութեանց առարկայ էին դարձած :

Հասարակութեան տրտունջը օրէ օր աւելի կը սաստկանար . կարծիք կար որ մանաւանդ պաշտօնատարներն իրենք իսկ կը հովանաւորէին հաճիներն իրենց ամբարները թաքցընելու , եւ փոխանակ անոնց հրամայելու որ հրապարակ հանեն պահուած մթերքը եւ ծախեն , կը պատժէին խեղճ հացթուխները որոնք հաց պատրաստելու համար պէտք էր որ հաճիներէն ալիւր գնէին , իսկ հաճիները կը մերժէին անոնց :

Պաշտօնատարներու մէջէն այդ մեղադրանքը ամենէն աւելի կ'իյնար «դարուղայ»ին վրայ , որուն հսկողութեանը ներքեւ կը դրանուէր բազարին եւ շուկային բարեկարգութիւնը :

Օր մը , իրիկուան էղանէն բաւական ետքը , աղօթասէր միւսլիմաններն իրենց նամազն ըրած վերջացուցած էին եւ կը պատրաստուէին քնանալու . բոլոր փողոցները դատարկուած էին , եւ քաղաքին մէջ գիշերային խաւարին հետ կը տիրէր խարին լռութիւն : Այդ այն ծանր գերեզմանական լռութիւնն էր որ յատուկ է բոլոր պարսկական քաղաքներուն արեւու մուտքէն յետոյ :

Կեանքը եւ գործունէութիւնը կը դադրի : Ամէն մարդ կը փակուի իր տանը մէջ , որովհետեւ փողոց ելլողը կարող է ձերբակալուիլ հանդիպող զարազօլներէն եթէ գիշերուան նշանաբառը չիդիտեր . իսկ գիշերուան նշանաբառը գիտեն միայն ոստիկանութեան մօտիկ եղող մարդիկ :

Յանկարծ գիշերային այդ լռութեան մէջ , տեղէ մը լսելի եղաւ շեփորի ձայն մը , անոր ձայնակցեցան ուրիշ շեփորներ զանազան տեղերէ . այդ չարագուշակ ձայները սարսափ

ձգեցին ամբողջ քաղաքին վրայ . ձայները կը լսուէին քաղաքին բոլոր բաղնիքներուն կըտուրներէն , իսկ անոնց գիշերային տարածամ հնչման շշանակութիւնը ժողովուրդը գիտէր(1) : — Խաղ-փուշները ոտքի ելան . . . Այդ շշուհը արագութեամբ սկսաւ տարածուիլ ամէն կողմ :

Մոխիրներու մէջէն դուրս խուժեց մերկանդամ թշուառութիւնը : Բաղնիքներու «գըտախք»ին մէջ մտնած , սեւցած խառնածաղանձը , ինչպէս սոսկալի բողոք մը , հետզհետէ հաւաքուելով եւ ստուարանալով , յառաջ կ'ընթանար սեւ , այլանդակ հոսանքով մը : Անոնց մէջ կային կիսամերկ կանայք , Ֆուրիայի դէմքով եւ խառնաչփոթ մազերով , որոնք զինուած էին քարերով : Անոնց մէջ կային ծերունիներ որոնք , ինչպէս ծերացած , հասունցած կատաղութիւն , իրենց մուրացկանութեան ցուպը այս գիշեր վրէժխնդրութեան գաւազան էին դարձուցած : Անոնց մէջ կային երիտասարդներ , բորբոքուած երիտասարդական կրակով ու բոցով . անոնց մէջ կային պատանիներ ու երախաներ , որոնք իբրեւ աղքատութեան ու զառնութեան խեղճուկ գաւակներ , կ'աղաղակէին՝ «Հա՛ց կ'ուզենք . . .» : Այդ աղաղակը , ահեղ աւելի ազդու էր քան բոլոր զէնքերուն շաչիւնը : Բոլորին կ'առաջնորդէր մեր նախածանօթ ծերունի Ահմէտը , զինուած իր նըշանաւոր հողաթափներով ու ծանր վերարկուով : Այս գիշեր կարծես թէ երիտասարդացած էր : Թանձր վերարկուն ձախ թեւին վրայ ձգած էր , որ իրեն իբրեւ վահան կը ծառայէր , իսկ աջ ձեռքը բռնած ունէր , ինչպէս երկու ուռմբ , իր երկու ծանր հողաթափները : Անոր քովէն կ'երթար երիտասարդ Ճաֆարը , որ մէկ ձեռ-

քով կը կրէր խաղ-փուշներու դրօշը , իսկ միւս ձեռքով՝ իր փոքր մանուկը : Դրօշին վրայ կը ծածանէր խաղ-փուշներու նշանը , որ կը պատկերացնէր նիհար , կիսամերկ մուրացկան մը , կոացած մէջքով , որ մատով երկինքը ցոյց կուտար եւ կարծես կ'ըսէր՝ «Այնտեղ դատաւոր կայ» :

Բարձր ձողերու գլուխը վառած ջահերու կապտագոյն բոցերը կը լուսաւորէին կատաղի խուժանը , որ անընդհատ կերպով կը զոտար , կ'որոտար , եւ ընդհանուր աղաղակներու մէջէ կ'որոշուէին երեք բառեր միայն . «Յա՛ շո՛ւ . . . Հա՛ քք . . .»

Բազմութիւնը երթալով կը սաստկանար . անոնց հետ կը խառնուէին նոր մարդիկ քաղաքի սրիկաներէն , որոնցմէ շատերը զինուած էին : Բան մը չուենալով , այդ ստահակները կորսնցնելու բնաւ վախ չունէին : Իրենց կը մնար իրենց մերկ անձը միայն , որմէ վաղուց կը ցանկային ազատիլ : Մէկ քանի տեղ ոստիկանութիւնը իրենց դիմացը ելաւ , բայց վանցին քարերով եւ , փայտերով : Մէկ քանի տեղ «ղարաւուլխանա»ներու (1) պահակները փորձեցին փակել անոնց ճանապարհը , բայց պահականոցը մէկ բոպէի մէջ քարուքանդ եղաւ անոնց կատաղութեան առջեւ :

— Եա՛ շո՛ւ . . . Հա՛ քք . . .

Լսելի կ'ըլլային խառնածայն աղաղակներ եւ շրջակայքը կը զղրղուէր հազարաւոր ձայներէ :

Խաղաղ քնէած քաղաքացիներ իրենց սենեակներուն մէջ լսելով այդ աղաղակները , կը կարծէին թէ հոգեւոր թալօր մըն էր որ կ'անցնէր փողոցներէն : Որովհետեւ քիչ չէր պատահէր որ սովի , ժանտախտի եւ ուրիշ պա-

(1) Պարսկական բոլոր քաղաքներու մէջ , ամէն օր առաւօտեան արեւուն ծագումէն շատ առաջ , բաղնիքներու կտուրներէն շփոթներ կը հնչեցնեն . ատի նշան է թէ բաղնիքը արդէն պատրաստ է լուացուողներու համար : Լուացման արարողութիւնը պէտք է կատարուի սուտուն կանուխ , որպէս զի արեւը , դուրս գալէ յետոյ , զանոնք մաքուր տեսնէ , բայց ամենեւին սովորութիւն չէ գիշերները շփոթ հնչեցընել : Երբ այդ բանը պատահի , արդէն ս եւ է դժբաղդութիւն մը կը նախագուշակուի , ինչ-

պէս եւ քրիստոնէից եկեղեցիներու զանգակին տարածամ ձայնը :

(1) Ատի տերվիշներու սովորական բացագանջութիւնն է որ կը նշանակէ՝ «Ո՛վ Տէր , ո՛վ Արդարութիւն», կամ «Ո՛վ Տէր , ո՛վ Իրաւունք» :

(2) Պարսկաստանի քաղաքներուն մէջ գիշերապահ զինուորները փողոցները չեն պտըտիր այլ կանգնած կը մնան առանձին պահականոցներու մէջ որ շինուած են ամէն մէկ փողոցի ծայրը կամ գլխաւոր անցքերուն մօտ :

տահարներու փամանակ ամբոխը ամբողջ գի-
չերներ փողոցները կը լեցնէր, մինչեւ լոյս կը
թափառէր եւ կուրծքը ծեծելով, աղաղակելով
երկնքէն գթութիւն կը խնդրէր Բայց այդ թա-
փօրը կը ցանկար որ երկնքի վրէժխնդրու-
թեան գործիքն ինքն ըլլար :

Անցաւ պազարին հրապարակէն, լայն փողոց
մը մտաւ եւ իր քայլերն ուղղեց զէպ ի նշա-
նաւոր տուն մը : Այդ միջոցին աղաղակներն
աւելի սաստկացան : Չայրացած խուժանը իր
ճամբուն վրայ կը փշրէր, կը խորտակէր հա-
ճիներու եւ ուրիշ մեծամեծներու զոներու բո-
լոր զարդարանքները : (1)

Նշանաւոր տանը առջեւ հասնելով, բազմու-
թիւնը զայն շրջապատեց : Սկսան մուրճով,
կացիններով, տապարներով խորտակել զու-
ները : Յետոյ բազմութեան մէկ մասը ներս
թափեցաւ : Շատ չանցաւ, սալաշատակնե-
րուն վրայէն քաշկրտելով զուրս հանեցին զի-
ակ մը եւ դրան առջեւ ձգեցին . անոր մօտը
կայնեցաւ ծերունի Ահմէտը, եւ կարգաց հե-
տեւեալ դատաստանական վճիռը . « ահա մեր
թշուառութեան եւ աղքատութեան սկզբնական
պատճառը : Եթէ այս ամենահարուստ հաճին

(1) Պարսիկները մասնաւոր հոգ կը տանին
իրենց տան գլխաւոր դրան զարդարանքնե-
րուն . որքան մեծ ու բարձր է դուռը, այնքան
բարձր է եւ տան տիրոջ զիրքը : Դուռը կը
ներկայացնէ տիրոջն իշխանութիւնն ու փառ-
քը : Արքունիքի ամենաբարձր դռնէն սկսեալ
մինչեւ յետին պաշտօնատարին ամենախոնարհ
դուռը, բոլորն ալ իրենց մասնաւոր խորհուրդն
ունին : Այդ պատճառով է որ դուռ բառն իր մէջ
կը պարունակէ իշխանութեան իմաստը իր ըն-
դարձակ նշանակութեամբ . « բարձրագոյն դուռ »
ըսելով, կը հասկնանք պետական կազմակեր-
պութեան ամենաբարձր ներկայացուցիչը :

այնքան ազահ չըլլար, մենք անօթի չէինք
մնար . ան խլեց մեր հացը եւ իրեն համար
ապտրանքներ շինեց : Քանզեցէք այդ ապա-
րանքը որ անիրաւութեան եւ անգթութեան
արդիւնքով է կառուցուած : Քանզեցէք, եւ իր
սեփական տան աղիւսներովը, որ մերարիւնովն
ու արցունքովն է շաղուած, քարկոծեցէք այս
մարդը» . . .

Ձահերուն կապուտակ լուսաւորութեանը
ներքեւ, ծերունիին մտայլ դէմքը աւելի սոս-
կալի կը դառնար : Ինքն առաջինը եղաւ որ իր
ձեռքի հողաթափներէն մին դատապարտեալին
գլխուն զարկաւ : Անոր օրինակին հետեւեցան
կիները, որոնք ծոցերնին լեցուած քարերը
ապիրատին վրայ նետեցին : Յետոյ հաղաբաւոր
ձեռքեր սկսան քանդել աղիւսները եւ մէկ
քանի ըոպէի մէջ անոր զիւակին վրայ ահագին
բլուր մը կազմուեցաւ իր փառաւոր ապարանքին
փլատակներէն :


Այդ մարդը հաճի Ռահիմն էր, քաղաքին ա-
մենէն անգութ հարստահարիչն ու վաշխա-
տուն :

Կողոպտելով հաճիին հարուստ ամբարները,
բազմութիւնը յաղթական աղաղակներով
սկսաւ զէպ ի ուրիշ տուն մը դիմել :

Ատի քաղաքի «դարաղայ»ին տունն էր, որ
ցորենատէրերէն կաշառք ընդունելով, սովին
սաստկանալուն կը նպաստէր :

Անոր դիակն ալ իր տանը փլատակներուն
տակ թաղուեցաւ :

ՐԱՖԻԻ



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

— ԵՐՈՒԱՆԵՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ — Բարեկի բը-
 վըշկական Համալսարանին մէջ, հիւսուածա-
 բանութեան թէքնիքի նոր դասընթացք մը
 հաստատուած է, իբր լրացուցիչ Պ. Մաթիաս
 Տիւվալի հիւսուածաբանութեան դասընթաց-
 քին: Այդ նոր դասընթացքը յանձնուած է Ե-
 րուանդ Մանուէլեանին եւ իր ընկերներէն՝ պ.
 Կապրիէլ Տըլամարին: Մանուէլեան պիտի ու-
 սուցանէ մետաղաւորութիւնը (քլորիւր տ'օր, քրո-
 մօ-արծաթական մեթոտ կողմի-Քահայի, մե-
 թոտ նիսըլի, էրլիխի, Վէյսի): պ. Տըլամար՝
 Պենտայի, Բոտովիտովսթիի, Հայտընհէյնի,
 Պրոնտիի մեթոտները, եւն:

Այս դասընթացքը պիտի սկսի 1902 փետ-
 րուար 17ին: Անոր պիտի կարենան հետեւիլ
 Ֆրանսացի եւ օտար բժիշկներ եւ ուսանող-
 ներ, վճարելով 50 ֆր. եռամսեային համար:

Միւս կողմէն աստիճանով «Աթրիպիւն Մետիքալ»
 բժշկական շաբաթաթերթը, զոր կը վարէ Ծա-
 նօթ Ղլխտարոյ տ. ք. Լապոտ եւ որուն խմբ-
 րադրական մասնաճիւղին անդամ են Թիյեօ.
 Մանեան, Կրեհան եւ այլ մեծանուն գիտուն-
 ներ, իր 18 զեկտեմբերի թիւին մէջ հրատա-
 րակած է Երուանդ Մանուէլեանի մէկ շատ զե-
 ղեցիկ յօդուածը, հետեւեալ տիտղոսով՝ «Կոլ-
 ճիի մեթոտը, ջղօսին տեսութիւնը եւ քանի
 մը վարկածներ ջղային գրութեան պաշտօնա-
 վարման մասին»: Խմբագրութիւնը սա ծանօ-
 թութիւնը գրած է յօդուածին ներքեւ: «Մեր
 ողբացեալ աշխատակից Տր. Բիյեէի մահու ընդէն
 ի վեջ, մեծ դժուարութիւն կրած էինք անոր
 յաջորդ մը գտնելու համար որ հիւսուածա-
 բանութեան, ընդհանուր, բնականոն ու պիտա-
 բանական անգամազննութեան մէջ անոր ձեռն-
 հասութիւնը ունենար: Մեր մեծանուն պաշ-
 տօնակից եւ բարեկամ բրոֆեսոր Մաթիաս
 Տիւվալ հաճեցաւ մեզի նշանակել՝ իբրեւ Բիյե-
 եէյի յաջորդ՝ իր ամենէն ուշագրաւ աշակերտ-
 ներէն մին, այս յօդուածն ստորագրող պ. Ե.
 Մանուէլեանը, որ այս նիւթին մէջ իր կարու-
 ղութեանց ապացոյցը տուած է արդէն»:

Մեր շնորհաւորութիւնները Մանուէլեանին
 — մեր սրտազին ցաւակցութեանց հետ իր հօ-
 րը մահուանն առթիւ:

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ. — «Մթիւաթօն» հրատարա-
 կած է իր զեկտեմբեր 15ի թուով հակար Ծա-
 հինի գործին վրայ յօդուած մը, որուն թարգ-
 մանութիւնը պիտի տանք մեր յաջորդ թիւով:

Պ. ԱՐՄԵՆԵԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ: — Երեկոյթը
 գոր խումբ մը Հայեր կազմակերպած էին Պ.
 Արմենեանի թիֆլիս մեկնումին առթիւ, յաջող

անցաւ: Սրահը լեցուն էր հայ եւ ֆրանսացի
 ունկնդիրներով: Յայտագիրը սրուն պարունա-
 կութիւնը հրատարակած էինք անցեալ թիւով,
 սմբողջութեամբ գործադրուեցաւ Թէաթր Ան-
 թուանէն գերասաններ եւ Բոնսէրվաթուարէն
 աշակերտներ խաղացին Գուրթիլիի երկու շա-
 սիրուն արարուածները, «Պարոն Պատէն» եւ
 «Թէոտո իր լուցկիները կը վնասէ»: Օր. Վե-
 րիք, աշակերտ Բոնսէրվաթուարի, երգեց, եւ
 Օր. Յորթէ, Բոնսէր Բոլոնի առաջին ջութա-
 կահարներէն, քանի մը կտոր զարկաւ մեծ
 ճարտարութեամբ: Պ. Բոլ Մունէ արտասանեց,
 հոյակապօրէն, Հիւկոյի «Ովկիանու գիշեր»ը եւ
 Ժողեֆէն Սուլարիէն երկու հնչեակ, Օր. Տել-
 վէր արտասանեց, հզօր զգացումով մը, Լըքոնիթ
 տը Լիլի «Հիւլմայի սիրտ»ը եւ Սիւսէի «Լիւսին
 պ. Գիլի» Լոթիէ շատ սրամիտ կերպով ար-
 տասանեց Լաֆոնթէնի առակներէն մէկ քանին:

Պ. Արմենեան ներկայացաւ «Քրիմոնի վնասոր
 ծ»ին մէջ, ուր Ֆիլիբոյի դերը կատարեց. ան-
 կեղծ զգացումով մը ապրեցաւ այդ տձեւ մարմ-
 նոյ մէջ գեղեցիկ հողի մը շարժարանքը քաշ-
 կըրտող ցաւագին տիպարը, անոր արցունքները
 գիտցաւ լալ եւ գիտցաւ գալարել արուեստին
 ու սիրոյ պայքարին մէջ բզգոտուող անոր դառ-
 նօրէն ծիծաղաշարժ սիլուէթը. իր միմիքի
 ճապկութիւնը, ձեւերու գիւրութիւնը, վրու-
 ցուածքի պէսպիսութիւնը գնահատուեցան,
 ինչպէս եւ Ֆրանսերէն մաքուր արտասանու-
 թիւնը: Իրեն կարելի էր մեղադրել անշուշտ
 ոտանաւորներուն աւուժին մէջ լայնութեան
 պակասը, եւ երբեմն նոյն իսկ ծայրայեղ լր-
 փրտուք մը, խաղացուածքին մէջ՝ տեղ տեղ
 քիչ մը պայմանագրականութիւն, ու քալու-
 ւածքին մէջ չափազանց անկար, գրեթէ կաղ
 հիւանդի տատանկոտութիւն մը զոր աւելորդ էր
 բնօրնի խեղճ Ֆիլիբոյին վրայ՝ արդէն իր
 կուզութեամբ բաւական դժբաղդ. բայց այդ
 մանրամասնութեան թերութիւնները կ'անհե-
 տանային իր «զգացուած» խաղին սմբողջու-
 թեանը մէջ. ջութակին հետ մինախօսութիւննե-
 րը մանաւանդ, այն հիւանդագին գորովիչ շատովը
 որով ոգորեց զանոնք, յուզեցին սրահը. որ
 բուն ծափերով իր գոհունակութիւնն յայտ-
 նեց արուեստագէտին:

Պ. Արմենեան ներկայացաւ քանի մը ար-
 տասանելու համար Պէշիքթաշիկանի «Եղբայր
 եմք մեք»ը, Դուրեանի «Իմ մահ»ը եւ Ալիշանի
 «բամ փորտան»ը, ինչպէս եւ Սիւլիի Բրիտանի
 «Կոտրած անօթ»ը, եւ պ. Տոտէի «Սալորներ»ը
 Ֆրանսերէն:

Պ. Արմենեան կը մեկնի մօտերս զէպի Թիֆ-
 լիս: Լիակատար յաջողութիւն կը մաղթենք

իրեն՝ արուեստագիտական ասպարէզին մէջ, ուր քանի մը տարուան հետացումէ մը յետոյ, կը մտնի վերստին:

Պ. ԵՂԻՍՉԱՐԵԱՆԻ ՏԵՐԵԿՈՅԹԸ. — Դեկտեմբեր 8ի կիրակի օրը, Պ. Լ. Նդիաղարեան երաժշտական ցերեկոյթ մը տուաւ Պոտինիերի սրահին մէջ, ցերեկոյթ մը որ իրին նպատակ ունէր Հայոց ժողովրդական երգերը ճանչցնել ֆրանսացի հասարակութեան: Այդ շատ գեղեցիկ նպատակն իրագործելու համար թափուած ու եւ է ջանք գովելի կը գտնենք, բայց Պ. Ն. Նդիաղարեան ղեկավարար գործին համար պէտք եղած բոլոր ձեռնահասութիւնը չունի: Իբրեւ հայ ժողովրդական երգ ներկայացուեցան «Մայր Արաքսի»ի եղանակ մը որ շատ հաւանականաբար իտալական օրերայի մը աղօտ մէկ ցուքն է, «Հերիք որդեակք»ը որ հայ ժողովրդական երաժշտութեան կտոր մը չէ, այլ Չուհաճեանի անձնական ստեղծագործութիւնը թրքական եղանակներու նմանողութեամբ, «Երբոր քացուին»ը որուն բառերն ու եղանակը նորմանտական երգէ մը օրինակուած են, «Հնկեր»ը, որուն եղանակը թրքական երգէ մը անուած է, եւ իբրեւ Հայոց ազգային քայլերգը ներկայացուեցաւ «Մեր Հայրենիք»ը, զոր Նալբանդեան դրած է իտալական երգէ մը ներչնչուելով եւ որուն վերջը աւելցուցած է քանի մը տուներ ուր իտալացուց ջաջութեան քով Հայոց կիներուն անտարբերութիւնը, այրերուն թուլութիւնը կը ձողկէ, տուներ՝ ուրոնք եթէ ֆրանսերէնի թարգմանուէին՝ քաւական տարօրինակ պիտի թուէին քայլերգի մը համար, որովհետեւ քայլերգ մը ազգի մը քաջութիւնը, յաղթանակը, փառքը կ'երգէ, եւ ոչ թէ անոր վատասրտութիւնը: Նալբանդեան այդ ոտանաւորը գրած ատեն, մտքէն չէր անցընէր անշուշտ թէ օր մը իբրեւ Հայոց քայլերգը պիտի ներկայացուի օտարներուն: Ինք զայն գրած էր Հայոց թմրութիւնն ապտակելու համար:

Այսու հանդերձ ցերեկոյթը յաջող անցաւ: պ. Թիերսօ, ծանօթ ֆրանսացի երաժշտագէտը, հակիրճ բանախօսութիւն մը ըրաւ հայկական ժողովրդական երաժշտութեան վրայ. ցաւալի է որ պ. Թիերսօ, որուն անկատար տեղեկութիւններ տրուած էին, յայտարարեց թէ երաժշտութիւնը Հայոց մէջ դեռ ժողովրդական ձեւէն վեր չէ բարձրացած, ինչ որ անձիշտ է, քանի որ Չուհաճեան երաժշտական թատերախաղեր յօրինած է, հոմերոսս վարդապետը շարականներէ ներչնչուած օրաթորիներ ու քառաձայններ, պ. պ. Սվաճեան եւ Էլմաս՝ զաշնակի կտորներ: Պ. Թիերսօ կարդաց մէկ քանի ժո-

ղովրդական երգերու թարգմանութիւնը («Կը ունկ»ը, «Արաքսի արցունք»ը (1) մեծ յուզում յառաջ բերին): Պ. Նդիաղարեան, օր. Շըվալիէ եւ օր. Բալասարա երգեցին, յիշուած երգերէն զատ, «Չիմ վզին»ը, «Չէյթունցիները», «Լորիկ»ը, «Ո՞ր մահկանացուն», ու ջերմապէս ծափահարուեցան:

ՏՐ. ԲՈՒՅՈՒՄ ՃԵՎՆ. — Հաճոյքով կ'իմանանք թէ Ֆիլիպպէ հաստատուած հայ բժիշկ մը, տր. Բույուսմճեան, Միզանցքարանութեան ֆըրանսական ընկերակցութեան թղթակից անդամ անուանուերէ: Վերջերս արդէն թղթակից անդամ անուանուած էր Բարիզի մանկավարժական ընկերութեան: Տր. Բույուսմճեան կը պատրաստէ աշխատութիւն մը երկու սեռերու միջանցքային հիւանդութեանց վրայ:

— Թիֆլիսի «Քավքասքի Վեստնիք» ամսագրին յունուարի թիւին մէջ պիտի երեւաւ Ա. Չօպանեանի «Մերքիւր աը Յրանա»ի մէջ հրատարակուած Նարեկացիի մասին ուսումնասիրութիւնը. պ. Ի. Վեսելովսքիի ձեռքով ուսեսերէնի թարգմանուած:

— Ամերիկայի կարեւոր ամսագիրներէն մին, Պըրլինկթընի «Ինթէրնէշընըլ Մընթլի»ն, պիտի հրատարակէ իր յունուարի թիւին մէջ Ա. Չօպանեանի մէկ ընդարձակ յօդուածը, «Հայերն ու Ներոպան» տիտղոսով:



(1) «Արաքսի արցունք»ն ալ ներկի չէ իրեւ ժողովրդական բանաստեղծութիւն մը ներկայացնել, դասական գրականութեան էջ մըն է ան:

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

— 0 —

ՔԼԵԱՆԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԱՐԿՈՒԹԻՒՆ

«Ազատ խօսք» անունով քուրջի մը մէջ, զոր քանի մը ամսէ ի վեր կը հրատարակեն պ. պ. Արփիարեան, Բաշալեան եւ Երուանդ Օտեան, — քուրջ մը զոր կարելի է կոչել օրկան ստու թեան, վատու թեան եւ փտու թեան, եւ որուն վրայ քանի մը բառ պիտի ըսեմ «Անահիտ»ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ. — հետեւեալ տողերը կը գտնեմ.

«... Ի՛նչ անուր Ժպրհու թիւն մըն է՝ Քըրանսական դատարանին դիմելու այս ձախորդ ու վնասակար մտածումը: Հատուցո՛ւմ իրեն եղած անարգանքներու դէմ, Բայց պ. Արչակ Զօպանեան հա՛ա երկու տարի է որ ուրիշ բան ըրած չունի բայց եթէ առ ուան անարգել, նախատել, անուանարկել: Իր գրական ամբողջ ճիգը այսօր ուրիշ բանի չի ձգտիր բայց եթէ նորանոր հայտնութիւններ դարձնելու: Այդ երբեմնի բանաստեղծն ալ հազուապէս որակականը կամ ինքնատիպ փոխաբերութիւնը փնտռելու բարձր տենչով չէ որ կը լլկի, հապա է՛ն աղտոտ յիշոցը եւ է՛ն վարնոց լուտանքը: Իր ո՛չ մէկ քերթուածին գոհունակութենէն սերտը աչնքան խայտանքով չճխաց անշուշտ որքան այն օրը երբոր անարգ գիւտն ըրաւ «մարդկային կղկղանք» անուանելու հայ գրագէտ մը որ ոճիւրը գործած էր պ. Զօպանեանի գրականութեան չհաւնելու:»

Այս անամոթ տողերն ստորագրողներուն կը հարցնեմ: — Ո՞րն է իմ ամբողջ գրական արտայտութեանցս մէջ այն միակ էջը, այն միակ տողը զոր «անուարկութիւն» կարելի ըլլայ համարել: «Ազատ խօսքին» երեք ուխտ թիթիները անդիակ են այն ամէն բաններուն որոնք զեղեցիկ հողի մը կը ձևացնեն, բայց վերջապէս անգիտակ չեն հայերէն լեզուին, զրիչ ալ դիտեն, եւ իւրաքանչիւր բառի որոշ իմաստը անմանօթ չէ իրենց գիտեն որ «անուանարկութիւնը» երբեք ներելի չէ շփոթել «քննադատութեան» հետ. անուանարկութիւնը արարքն է այն մարդուն որ առանց լուրջ փաստերով համոզուած ըլլալու, գործիչի մը անունն ու պատիւը կը ջանայ մրստել անհիմ զրոյցներ խոչորցնելով ու գործածելով անոր դէմ, ու այդպէս կը վարուի՝ ոչ թէ դազափարի մը ծառայելու համար, այլ մարդ մը կործանելու փափաքէն մղուած: Քննադատութիւնը ազատ կարծիքի մը արտայայտութիւնն է՝ գործիչներու նկատմամբ, անոնց գործին, նկարագրին ցոյց տուած առաւել կամ նուազ ուղղամտութեան, անկեղծութեան, ազնուութեան դատումը՝ հանրային շահերու տեսակէտով. ես

չատ մարդ քննադատած եմ, եւ կը պարծիմ ատով, որովհետեւ ատոր է որ կը պարծիմ թըշնամիներու ջոկատ մը գոյացուցած ըլլալու: որոնք այսօր բոլորն ալ՝ ինչպէս երբեմն շուրջս պիտի շարունակէին քսքսուել եթէ չճարպիկ ու զերասան զիջանէի ըլլալ ուրիշներուն պէս. ես շատ մարդ քննադատած եմ, եւ յաւակնութիւնը չունիմ միշտ ճիշդ տեսած ըլլալու, բայց ապահովութիւնը ունիմ, — հետաքրքիր եմ տեսնելու այն անձը որ պիտի յաջողի հակառակն ապացուցանելու — թէ միշտ անկեղծ ու համոզուած եմ եղած, միշտ հանրութեան օգտակար ըլլալու միակ նպատակէն մղուած:

Եւ ո՞վ է ան որ ինձի պիտի համարձակի մեղադրել անուանարկիչի դեր կատարած ըլլալը: Արփիարեանը՝ որ աիկին «Մարտոն ցոյց կուտար նուազած ու ձեռքը դրամ գրուելուն պէս սքափող, որ բոլոր Դաշնակցականները Ռուսիոյ վարձկան դաւադիրներ կը նկատէր. Բաշալեանը, որ թէպէտ իր ստորագրութեան տակ ոչ մէկու դէմ անաբար երբեք չէ համարձակած յարձակիլ, բայց որ մութին մէջէն երկու տարիէ ի վեր զիս ամենէն գձուծ, ամենէն ապիրատ կերպով կ'անուանարկէ եղեր՝ Ամերիկայի Հնչ, մասնաճիւղերուն պիտի թէ ես Դրօշակեաններուն ծախուած եմ (!!) որպէս զի «Անահիտ»ի բաժանորդները նուազին. Օտեանը, որ «Ազատ խօսքին» մէջ չորս հինգ ամիսէ ի վեր, վարնոց հնարամտութեան մը բոլոր միջոցները կը վատնէ զիս իբրեւ «պապուկ» մը, «խաբեքայ» մը ներկայացնելու համար, ինձի վերագրած զգացումներուն անիրականութեանը խորապէս համոզուած ըլլալով հանդերձ:

Ո՞վ պիտի ընէ ինձի այդ մեղադրանքը. Դրօշակեանները, որոնք իրենց «Յաւելուած»ին մէջ զիս ու Բաշալեանը «նրբացեալ սրիկայ» անուանեցին իբր միակ փաստ ունենալով անմանօթ ապուշի մը տարտած ու չստուգուած մէկ վկայութիւնը, եւ Արփիարեանը մատնիչ հռչակեցին կեղծ թղթերու վրայ հիմնուելով: Չերա՞ղը արդեօք, որ Հայոց ցաւերն ու արժանիքները Եւրոպային ճանչցնելու նպատակ ունեցող իր Փրանսերէն թերթին մէջ նազարէկը ներկայացուց իբրեւ խաչապող մը, Հ. Մենէվիչեանը «չուն» անուանեց, Վիեննայի Միթիարեանները կեղծաբար հռչակեց, Արփիարեանը՝ մատնիչ ու գող, եւ զիս յորջորջեց «Օսքար Ուայլտի փատաբան»: «Մշակ»ը արդեօք, որ ինձի վերագրեց Նուպար փառայէնը դրամ առնելով Ներսէս պատրիարքը նսեմացուցած ըլլալու երեւակայական ոճիւրը, կամ «Ծարժո՛ւմ»ը արդեօք, կամ Բասմաջեանը բեւեռագէտը, կամ պ. Քալբաքճեանը, — ո՞վ, ո՞վ վերջապէս:

Եւ ո՞րն է, կը կրկնեմ, իմ այն միակ էջս ուր անուանարկողի, միտտելու հաճոյքին համար մնտողի, կործանելու նպատակով միայն

յարձակողի հողին զգացուի: «Պատասխանա-
տուութիւններ» յօդուածս է արդեօք, զոր Ար-
փիարեան «Նոր կեանք»ին մէջ կ'անուանէր
«վրդովեալ տաք հայրենասիրութեան էջ մը» .
պ. Չերազին հանրային կեանքի, ազգային գոր-
ծունէութեան սխալներուն մասին գրածնե՛րս
են, որոնցմէ մէկուն (գեղանի Չիպային խընդ-
րոյն վրայ գրածիս) համար Օտեան հետեւեա-
լը կ'ըսէր ինծի նամակի մը մէջ՝

«Չերազին վրայ գրածդ սքանչելի էր .
լախտի պէս պիտի իջնէ այդ յորովայնէ
ընտրեալ ապուշին գլխուն, եւն ւ»

Ինքզինքը Բարիզցիներուն իբրեւ Պոլսոյ
թաւրոնին մեծ ողբերգու ներկայացնող Գալ-
ֆահանին մասին գրած յօդուածս, կամ զայն
պաշտպանել յանդգնող Հ. Յրեմիանին երեսին
նետած քրոնիկս, Բաշալեան երեկոյթին պատ-
մական խայտառակութիւնը նշաւակող է՞ջս,
կամ արդեօք ազգային խնդիրներու մասին վը-
րած յօդուածնե՛րս, որոնցմէ յետոյ պ. Արփիար-
եան՝ դեռ անցեալ տարի՝ «Նոր կեանք»ի մէջ
կ'ըսէր՝ «Անահիտ»ի խմբագրապետին բազմա-
կողմանի՞նք լուրջ միտքը...»:

Ի՛նչ անանուանելի լրբութիւն պէտք է «Ու-
րազան»ին պարունակած անազնուութիւնները
որակելու համար գործածած մէկ կծու բայց
ոչ անձիգ բացատրութիւնս գրականութեանս
չհաւնող անձի մը դէմ զգացուած նեղսրտու-
թեան մը վերագրելու համար. ի՛նչ գործ ու-
նէր գրական քննադատութիւնը հրատարա-
կութեան մը մէջ ուր մատներս, մապերս, հա-
զուստներս, ջիղերս, հասակս, քալուածքս,
կոնակս նկարագրուած էին տեսլական հաւա-
տարմութեամբ մը, եւ ուր ներքին կեանքս՝
արտաքնոցի ապակիի մը ետեւէն ցուցուած
էր...:

Ո՞րն է այն անձը որուն նկատմամբ, զիտ-
մամբ, կիրքով՝ անիրաւ եղած ըլլամ, որուն
վրայ յարձակած ըլլամ՝ առանց լուրջ պատճա-
ռի, առանց համոզման, միմիայն զինքը ա-
ղարտելու, քանդելու համար: Արդեօք տր.
Քօլօլեա՞նն է որ պիտի գանդատի իր «Իսթերի»ի
մասին սխալ ըմբռնումը անհերքելի եւ միայն
պախալներու եւ օխապապիներու համար ան-
հասկանալի փաստերով ապացուցած ըլլալէս,
այն տր. Քօլօլեանը որ զիսհօրս դագաղին առջեւ
անզգայ ներկայացնելու համար Մանեանի մէկ
տողը փոխեց. Արփիարեա՞նն է որ պիտի անու-
անարկութիւն համարի իր մասին գրած յօ-
դուածս (Օտեանէն «հիանալի» հոչակուած) ուր
կը յայտնէի բոլոր այն քննադատելի կողմերը
զոր իր հանրային գործիչի տիպարն ինծի կը
ներկայացնէր չորս տարիէ ի վեր եւ ուր ան-
հուն յտակութեամբ, մանրամասնութեամբ,
ուղղամտութեամբ կը զանազանէի դարձեալ
ինչ որ կայ աղէկ՝ Արփիարեանին մէջ,
(խզումի յօդուած մը որ այնքան անախորժ էր

նորէն Դրօշակեաններուն որքան Արփիարեա-
նին համար.) Արփիարեա՞նն է կ'ըսեմ որ ինծի
անուանարկողի դեր պիտի վերագրէ, այն Ար-
փիարեանը որ դեռ այդ յօդուածը լոյս չտեսած
«Նոր կեանք»ին մէջ կը փութար հրատարակել
իր այլանպակ «Մեզի կը նային»ը ուր զիս կը
ներկայացնէր հացի կտորի մը ետեւէ հեւիկե
վազող բախտախնդիր մը եւ խորհուրդ կուտար
որ Պոլիս(!) դառնայի: Արդեօք Բաշալեա՞նն
է որ պիտի թուրէն ունենայ ինքզինքն ինձմէ
անուանարկուած համարելու, այն Բաշալեանը
որ անցեալ կազանդին կուգար եղբայրաբար
զիս համարուելու եւ օր մը առաջ Պարթեւեանին
«Սարազան»ին ձեռագիրը անոր հետ միասին
կարդացած եւ ինծի ու Շահնազարին դէմ քա-
նի մը լղրճուկ բաներ աւելցնել խորհուրդ
տուած էր, այն Բաշալեանը որ հիմա ինծի դէմ
կը հրատարակէ իր քուրջին մէջ իմ նկարա-
գիրս ամենէն սուտ զոյնով ներկայացնող ջըլ-
թիկութիւններ զոր ականի մուկ մը անդամ
պիտի ամչնար ստորագրելու: Կամ արդեօք
Օտեա՞նն է որ իմ դրչէս աղարտած պիտի նը-
կատէ ինքզինքը, այն Օտեանը որ պատուոյ
ատեսնին եկաւ վկայեց ի նպաստ ինծի ինչ-
պէս եւ թշնամանուած ազնիւ կնոջ մը, եւ որ
յանկարծ մէկ օրուան մէջ Չօպանանէն Գալ-
բաքճեան ցատքելու հրաչքը գործեց եւ իր մը-
տաւորական բոլոր կարողութիւնները հիմա
նուիրեր է իմ գործս ու անունս մրտաելու:

Եւ ի՛նչ վիթխարի անամօթութիւն ունենա-
լու է մարդ ըսելու համար թէ հրկու տարիէ
ի վեր «Անահիտ»ը «աս ու ան նախատելէն
ուրիշ բան ըրած չունի»: ո՞ր հայ թեր-
թը այնքան մշտական հոգածութիւն մը ցոյց
տուած է ի վեր հանելու ամէն հին ու նոր
արժանիք որ Հայութեան ծոցին մէջ յայտ-
նուած է կամ կը յայտնուի. ո՞ր իրական տա-
ղանդ ցոյց տուած Հայը զիս անտարբեր է զը-
տած իր առջեւ. Պարթեւեանին իսկ, այն միջո-
ցին ուր ինծի դէմ կը հայհոյէր, գրական ա-
մենաբարձր կարողութիւնները ես էի որ հըր-
չակեցի. եւ ի՛նչպէս մանաւանդ այս յիմար
մեղադրանքն ինծի կը համարձակին ուղղել
ճիշդ այն Արփիարեանը, Բաշալեանը եւ Օտ-
եանը որոնց մտաւորական արժողը գործունէ-
ութիւնը կայացած է հինգ ամսէ ի վեր մի-
միայն ամսէ ամիս «Ազատ Սօսք»ը հրատարա-
կելու, այսինքն թերթ մը որ «ուրիշ բան ըրած
չունի բայց եթէ աս ու ան (ու մասնատորա-
պէս զիս) անարգել, նախատել, անուանարկել»:

Ո՞վ է, ո՞վ է, կը հարցնեմ ու կը պնդեմ այս
հարցմանս վրայ, ո՞վ է որ պիտի իրաւունք
ունենայ, միշտ ուղղամիտ, միշտ համոզուած,
միշտ խղճամիտ, միշտ հանրային տեսակէտ-
ներն իրեն չարժատիթ ունեցող մարդու ինք-
նավստահութեամբ, անուանարկիչ հոչակել
զիս. եւ ո՞րն է — թող ցոյց տան — ան միակ
արարքս ուր անուանարկիչ պէս վարուած ըլլամ:

Ես անուանարկիչ չեմ եղած երբեք եւ չեմ կրնար բլլալ . բայց դիմակազերծող մը եղած եմ . եւ այն դէմքերը որոնց վրայէն դիմակը քաշած եմ , չեմ զարմանար որ մասներուս հարուածին կսկիծը յաւիտեան չմոռնան : Ու լեզէններ ալ եթէ միանան դէմս , չպիտի զազրիմ — թող ասիկա գիտնան — դիմակազերծող մը մնալէ :

«ՄՇԱԿ»Ը ԵՒ ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

«Մշակ»ը «Ազատ խօսք»ինուիրած էր վերջերս ուէքլամ-յօդուած մը , անոր ամենէն ցած , ամենէն ջլթիկ էջերէն մէկն ալ արտասուելով . յօդուածը , ճարպիկ , գովեստի բառ մը չէր պարունակեր . խմբագիրը երզիծական թերթի մը հիմնարկութիւնը ծանուցանելով բաւականանալու ձեւը կ'առնէր , բացատրելով թէ երզիծանքը միայն այն ատեն արժանիք ունի երբ ազնիւ է , երբ շահախնդիր եւ անձնական նկատուիներու չի ծառայեր , ու կ'եզրակացնէր թէ պէտք էր սպասել տեսնելու համար թէ ինչ ուղղութիւն պիտի ունենայ Օտեանի թերթը , եւ սակայն կը հրատարակէր դարձեալ (ստանց խմբագրին ուղղամտութիւնը անսարակուսելի հոգակել կարենալու) անոր թերթին մէկ հատուածը , կը հրատարակէր դայն՝ միայն որովհետեւ այդ հատուածը կը ձգտէր զիս ներկայացնել զղուելի գոյնով մը :

Երուանդ Օտեան տասր տարիէ ի վեր կը բռնէ առաջին տեղերէն մին թրքահայոց գրականութեան մէջ . իր «Հայրենիք»ին յօդուածներն , ինչպէս եւ հեզնական բազմաթիւ էջերը զոր ցրցքնեց վերջերս արտասահմանի մամուլին մէջ , զինքը կազուցած էին Պարոնեանի յաջորդը , եւ սակայն «Մշակ»ը երբեք մտքէն չէր անցուցած Օտեանը ծանօթացնել ուսահայ հասարակութեան , երբեք չէր փորձուած անոր էջերէն մէկն արտասուել . երկու տարիի չափ առաջ , երբ «Մշակ»ի խմբագրութիւնը շատ բարեկամական յարաբերութիւններ ունէր հետս . դիմեցի «Մշակ»ի տնօրէնին եւ առաջարկեցի որ Օտեան աշխատակցի այդ թերթին , հաւաստելով թէ «Մշակ»ի ընթերցողները գոհ պիտի ըլլային այդ տաղանդաւոր երզիծաբանին արտագրութիւններուն ծանօթանալով : «Մշակ»ի տնօրէնը չպատասխանեց առաջարկութեանս : Հիմա միայն «Մշակ»ը կը մտաբերէ Օտեանին գոյութիւնը իմացնել իր ընթերցողներուն , ճիշդ այն ատեն երբ ան իր տաղանդը լրբճեց՝ անազնիւ դատի մը ի սպաս դնելով զայն , երբ երզիծաբանէն ուրիշ բան չմնաց բայց եթէ միմոս մը . . . խեղճ «Մշակ» , ու խեղճ Օտեան . . .

ԱՄՕԹ Է

«Մշակ»ը իր նոյեմբեր էի թիւին մէջ կը հրատարակէր բարիզեան թղթակցութիւն մը որով Տ. Հ. Բ. երեւակայական սկզբնատառերուն տակ պահուըտած ճիղաւիթ մը կը ճգնի ապացուցանել որ Հայկական Միութիւնը քայքայուեցաւ՝ պ. Իսքէնտէրին եւ իմ պատճառովս , եւ թէ ես մեղաւոր եմ դատ բանալու որոշում տուած ըլլալուս համար : Այդ թղթակցութեանէն աւելի անբարոյական , աւելի լրկտի բան չեմ տեսած : Յօդուածին իւրաքանչիւր բառը ստուծիւն մը , խեղաթիւրում մը , վարպետութեամ մըն է :

«Մշակը» կը գրէ այդ դիմակաւոր պարոնը , իր ժամանակին յայտնել էր , թէ Պարիզում պ. պ. Թամազեանի եւ Ղամբարեանի ղեկավարութեամբ պիտի կազմուէր մի հայկական ընկերութիւն , որի ծրագիրները մասին աւելորդ է խօսիլ իսկ , քանի որ այդ համակրելի գաղափարը շնորհիւ մի քանի մարդկանց , իրականացում չգտաւ : Մենք բոլորովին միտք չունինք խօսիլ վերոյիշեալ ընկերութեան խանգարման պատճառներին եւ ոչ էլ խանգարումից առաջացած վէճերի եւ պատուի ատեանին մասին : Միջանկեալ կը յիշենք միայն , որ Պարիզի հայ գաղթականութիւնը իր անուշով կազմուած ընկերութիւնը՝ մասնաւոր , ոչ իրանից ընտրուած համարելով , բողոքում է , պահանջելով հաստատ հիմերի վրայ դնել իւր անունը կրող այդ հաստատութիւնը եւ հեռացնել միջից մի քանի անվստահելի մարդկանց :

Պ. պ. Ա. Չօպանեան եւ Իսքէնզէր իրենց անպատուած զգալով , պատուի ատեան են պահանջում , խոստանալով նորա վճիռներին հնազանդիլ : . . . »

Այդ պարոնը կը ստէ , յայտարարելով թէ Բարիզի գաղթականութիւնը կը բողոքէր որովհետեւ «իւր անունով» կազմուած ընկերութիւնը իր ամբողջութենէն չէր ընտրուած . «Հայկական Միութիւն»ը Բարիզի հայ գաղթականութեան անունը չի կրեր , իր նպատակը Բարիզի Հայութեան կողմէ գործելը չէր , եւ պարտաւոր չէր ինքզինքը ընտրել տալ Բարիզի բոլոր Հայերէն : Յետոյ այդ պարոնը ամենատիպար բանը ըսած կ'ըլլայ յայտարարելով թէ պ. Քալբաքճեան զիս անուանարկելու համար պաշտօն ընդունած ըլլայ Բարիզի հայ գաղթականութեանն (!) , երբեք գաղթականութիւն մը իրաւունք չի կրնար ունենալ պաշտօն յանձնել ո եւ է մէկու որ հանրային գործիչ մը անուանարկէ . եւ պ. Քալբաքճեանին պ. Թամամչեանի մօտ իր ամբաստանիչի դերը կատարելէն առաջ , Բարիզի գաղթականութեան մէջ , որ

հազար հոգի է կը բաղկանայ, բաց ի ընկերու-
թեան հիմնարկումի նիստերուն հրաւիրուած
չըլլալնն նեղացած մէկ քանի անձնամուկ պա-
րոններէ, ոչ ոք բողոք չէր բարձրացուցած
ընկերութեան դէմ եւ այդ պարոններն ալ
տրտուալ սկսած էին ոչ թէ երկու անձի, այլ
եւ ընկերութեան բոլոր անդամներուն դէմ, (յա-
ջորդ յօդուածի մը մէջ արդէն պիտի պատ-
մեմ մանրամասնօրէն այդ դժբաղդ ընկերու-
թեան ծնունդին բոլոր պարագաները, որոնք
չատ մը շահեկան խորհրդածութեանց նիւթ
կրնան ըլլալ):

Պ. Իսքէնտէր եւ ես պատուոյ ատեան պա-
հանջեցինք ոչ թէ մեզ պաշտպանելու համար
Բարիզի հայ զաղթականութեան ամբաստա-
նութեանը դէմ՝ որ գոյութիւն չունէր, այլ
երկու անհատի անուանարկողական մէկ ձեռն-
արկը քայքայելով՝ զբարտաթեան աղէտաւոր
սխտեմին ուժեղ հարուած մը տալու համար, —
եւ վստահ թող ըլլան որ տրուած գասը ան-
պտուղ չպիտի մնայ:

Պատուոյ ատեանը կազմուեցաւ ոչ թէ Պ.
Իսքէնտէրի եւ իմ ուղած անձերից, ինչպէս
կը գրէ «Մշակ»ի թղթակիցը, այլ այն երկու
անձերէն որոնց զիմած էին պ. պ. Քալբաքճեան
եւ Քայանի գանոնք անկողմնակալ, վստահե-
լի, բարեմիտ անձեր նկատելով, եւ որոնք մեր
մտերիմները չէին, մեզ մօտէն չէին ճանչնար,
եւ անոնցմէ գատ երրորդ անձէ մըն ալ, որ պ.
Քալբաքճեանին ամենօրեայ մտերիմն է, մինչ-
դեռ մենք պատուոյ ատեանին դատաւորնե-
րուն մէջ ո եւ է մտերիմ չունէինք:

Այդ պատուոյ ատեանը, կազմուած ուրեմն
մեզի համար ո եւ է մասնաւորապէս նպաս-
տաւոր հանգամանք չներկայացնող պայման-
ներու մէջ, — ընդհակառակն, — ձայներու մե-
ծամասնութեամբ ոչ-պապացուցուած հոչա-
կեց պ. Քալբաքճեանին բոլոր ամբաստանու-
թիւնները: Արդ, «Մշակ»ին թղթակիցը վը-
ճիւղը չի յիշատակեր, նոյն իսկ չ'ըսեր թէ ի՞նչ
է եզրակացութիւնն այդ վճռին, այլ սա ազ-
չեցուցիչ խօսքը կ'աւելցնէ.

«Չենք ուզում այստեղ ասել թէ ո՛ր կող-
մը արգարացած է այդ վճռով: Աւելի հետա-
քըքրականը հետեւեալն է...»

Բայց ո՞րն է հետաքրքրականը՝ եթէ վճիւղը
չէ. երեւակայեցէք «Մշակ»ի ընթերցող մը որ
վճիւղը չէ կարգացած. ի՞նչ պիտի մտածէ
Տ. Բ. Հ. ի յօդուածը կարգալով, անոր ընդհա-
նուր ոգիէն պիտի հետեւցնէ թէ վճիւղը յայտ-
նապէս «պապացուցուած» յայտարարած է պ. Քալ-
բաքճեանի ամբաստանութիւնները: Ի՞նչ բառ

կարելի է գործածել այսպիսի ընթացքի մը,
եթէ սրիկայութիւն բառը չգործածէ մարդ:

Ու թղթակիցը, այդքան զուարթ անտարբե-
րութեամբ մը ստուերի մէջ ձգելէ յետոյ վճռոյն
պարունակութիւնը, կ'անցնի այն խնդրոյն
որ իրեն համեմատ միակ հետաքրքրականն է,
— գատ բանալս — եւ այդ որոշումս կ'անուանէ
«աններելի քայլ». ինչպէս կ'ուզէք որ «Մշակ»ի
ընթերցողը այդ քայլին ներելի կամ ան-
ներելի ըլլալուն վրայ կարենայ անկախ եւ
զիտակից վճիւղ մը արձակել, երբ յօդուածա-
գիրը սքողած, նոյն իսկ չարափոխած է այն
բոլոր պարագաները որոնք բռնագատեցին զիս,
ինչպէս եւ պ. Իսքէնտէրը, դատարանի զիմե-
լու, քանի որ այդ միջոցը կը մնար միայն՝
սանձելու համար պ. Քալբաքճեանը, որ պատուոյ
ատեանի վճռոյն առջեւ խոնարհելու գրաւոր
խոստում տալէ յետոյ, վճիւղն ալ ու մեծամաս-
նութիւնը ներկայացնող երկու դատաւորներն
ալ քննադատեց հրապարակաւ եւ ինձի ու պ.
Իսքէնտէրին դէմ իր ամբաստանութիւնները
նոյնութեամբ կրկնեց 150 հոգիի ներկայու-
թեան:

«Մշակ»ին թղթակիցը կը խոչորցնէ, զիտ-
մամբ, այդ տեսակ դատի մը հետեւանքները.
կ'երեւակայէ որ Փրանսական լրագիրները պի-
տի զբաղին ատով, եւ թէ Թրքահայոց դատը
պաշտպանելէ ետ պիտի կենան (!) տեսնելով Հայ
մը որ իր պատիւն արատաւորող անձի մը ի՞նչ
օրէնքին միջամտութեանը կը զիմէ, — հասա-
րակ երեւոյթ մը որ ամէն օր կը պատահի
Ֆրանսայի մէջ:

Ամենէն գաւեշտականը, Տ. Հ. Բ ի այն սո-
ղերն են որոնց մէջ կ'աղաչէ պ. Քալբաքճեա-
նին որ պատուոյ ատեանին ներկայացուցած
փաստերը (') չներկայացնէ Փրանսական դա-
տարանը, հոգ չէ նոյն իսկ եթէ սուժէ, քանի
որ հայ ազգը պիտի երախտագէտ ըլլայ իրեն
Բարիզի Հայութեան բողոքին ներկայացուցիչն
ըլլալուն համար: Հետաքրքիր եմ տեսնելու,
դատի օրը, ո՞րոնք են Բարիզի այն Հայերը որ
ո եւ է անհատի մը պաշտօն կրնան յանձնած
ըլլալ հայ գործիչ մը Տօն-ժուռն հոչակել՝
չոչորդ ըսի ըսաւներու վրայ հիմնուելով: Իսկ
«Մշակ»ին կ'ուղղեմ հետեւեալ հարցումը. պ. պ.
Ղամբարեան եւ Թամամչեան Ռուսահայոց մէջ
յարգուած մարդիկ են՝ ինչպէս լսած եմ. ատա-
ջինը Մոսկուայի Համալսարանին մէջ միջազ-
գային իրաւագիտութեան ուսուցիչ էր մինչեւ
վերջերս, երկրորդը՝ իրաւագիտութեան լի-
սանսիէ եւ Թիֆլիսի պանքային նախկին տը-
նօրէն. պ. Քալբաքճեան երկու ամբողջ երե-
կոյթ ունեցաւ իր փաստերը պարզելու համար:

եւ զուրս թափեց ամէն ինչ որ ունէր իրբեւ
 փաստ. եթէ «Մշակ»ը, հակառակ որ պ. պ.
 Թամաձեան եւ Ղամբարեան ոչ-ապացու-
 ցուած հոշակեցին պ. Բալթաքճեանի ամբաս-
 տանութիւնները, կը հաւատայ որ պ. Բալ-
 քաճեան իրաւունք ունէր, ուրեմն «Մշակ»ը
 կողմնակալ, անուղղամիտ եւ ստախօ՞ս կը նը-
 կատէ պ. պ. Թամաձեանը եւ Ղամբարեանը :
 «Մշակ»ը այս հարցմանս է որ պէտք է պա-
 տասխանէ :

Տ. Հ. Բ. ի մը ձափառուքը նշանակութիւն
 չունի ինծի համար : «Մշակ»ի պէս թերթի մը
 մէջ այդպիսի ցածութեան մը առանց ո եւ է
 գիտողութեան հրատարակուիլն է որ նշանա-
 կութիւն ունի : Այդպիսի արարքներ հայհոյու-
 թիւններ են, ոճրագործութիւններ են Գրիգոր
 Արծրունիի յիշատակին գէմ, որ իր թերթը
 զրպարտութեանց մեղսակից ըլլալու համար
 չհիմնեց, այլ զրպարտիչները ջախջախե-
 լու համար : Չեմ գիտեր ե՞րբ պիտի նշմարեն
 «Մշակ»ի այժմեան խմբագիրներէն ոմանք թէ
 իրենց թերթին մեծագոյն թշնամիները իրենք
 են : Ամօ՞թ է վերջապէս, անօ՞ր է, ԱՄՕ՞թ է :

«ԱԶՍՏ ԽՕՍԲ» ԵՒ ԹՌԳԱԹԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

«Ազատ խօսք»ը ծանուցած էր թէ Մանչէս-
 թրաքնակ պ. Մ. Թոքաթեան որոշած էր 20,000
 կիւնէ նուիրել Անգլիոյ կամ Գերմանիոյ մէջ
 Հայկական վարժարան մը հիմնելու համար :
 Փափաքելով այդպիսի որոշում մը գնահատել
 «Անահիտ»ին մէջ այնպէս ինչպէս որ արժանի
 էր, բայց եւ չկարենալով բաւականանալ հայ
 թերթերու ամենէն թեթեւօլիկին կողմէ
 միայն տրուած սեղեկութեամբ մը, գիմեցի
 Մանչէսթրի բարեկամներէս մէկուն, որ ինծի
 հաղորդեց այն մանրամասնութիւնները, զոր
 հրատարակեցի «Անահիտ»ի նախորդ թուով, եւ
 որոնք կը հերքէին այդ գեղեցիկ լուրը : «Ա-
 զատ խօսք»ը իր 5րդ թիւին մէջ կը կրկնէր
 այդ լուրը, ու կ'աւելցնէր թէ 20000 կիւնէի
 նոր նուէր մըն ալ ըրեր է եզեր պ. Թոքաթե-
 ան վարժարանին պահպանման համար : նոյն
 իսկ կը ճշդէր թէ Փղոսկրի շահագործման
 անգլիական ընկերութեան բաժնեթուղթերը
 գնած է եզեր պ. Թոքաթեան իր այդ 20000
 կիւնէով : Դարձեալ գիմեցի Մանչէսթրի բարե-
 կամիս, այդ հանելուկին մեկնութիւնը խնդրե-
 լով. այս անգամ պ. Թոքաթեանի գրաւոր վկա-
 յութիւնն ունիմ, իր մէկ բարեկամին ուղղուած,
 եւ որ կը հաստատէ թէ «Ազատ խօսք»ին
 հրատարակութեանը պարզ կատակ մըն է :

Երբեք սակայն կատակ մը ասկից աւելի
 ախմար ու անազնիւ չէր կղած : Ար-
 տասանմանի ինչպէս եւ Պոլսոյ եւ Թիֆլիսի
 հայ թերթերն այդ լուրը արտատպեցին, շատ
 մը խեղճ տղաք յոյսը ունեցան անշուշտ այդ
 վարժարանէն օգտուելու, մինչդեռ այդ բոլորը,
 40000 կիւնէն, փղոսկրէ հանքերու բաժնե-
 թղթերուն գնումը, եւն, ըրորն ալ հնա-
 րուած մասալ մըն էին պարզապէս : Եւ հասա-
 րակութեան քթին այսքան անպատկառօրէն
 խնդացող, այսքան անամօթ ստութիւնով մը
 հայ երիտասարդութիւնը խարող այդ թե՛րթն
 է որ կը յաւակնի բարոյականի դասեր տալ,
 ճշմարտութիւնը պաշտպանել, ուղղամտու-
 թեան քարոզ կարդալ : . .

ԱՐՄԵՆԻԱ

Մարտիլիոյ «Արմենիա»ն իր վերջին թիւե-
 րէն մէկուն մէջ ինծի կը վերագրէ արարք մը
 որ իր երեւակայութեանը մէջ միայն գոյու-
 թիւն ունի : Պ. Փորթուքալեանի համեմատ «Ա-
 նահիտ»ի վերջին մէկ քանի յօդուածներովս
 «Ժողովրդին համար»ի խմբագիրները Ֆրանս-
 սական կառավարութեան մատնանիշ ըրած եմ
 եզեր, եւ Բասմաջեան մեւեռագէտն ալ սուս
 կառավարութեան . . .

Ահաւասիկ, բառ առ բառ, պ. Փորթուքալեա-
 նի տողերը .

«Ժող. համ. » Ֆրանքո-թուրք միջադէպին
 առթիւ այն կարծիք յայտնած էր թէ այդ
 միջադէպը չուտով կը փակուի եւ զիւանա-
 գիտական յարաբերութիւնները կը վերսկը-
 սին Ֆրանսայի եւ Թուրքիայի միջեւ . . . «ա-
 նահիտ»ի խմբագիր տնօրէնը «Ժող. համ. »ի
 բերանը դնելէ յետոյ այսպիսի խօսքեր թէ՛
 Ֆրանսա Հայոց խնդիրը զորժածեյի յետոյ
 իր գոնիկի շահերուն յաջողմանը համար՝
 պիտի թողու որ Սուլթանը հանդարտիկ ա-
 ւարտէ Հայերուն ջնջումը . . . եւն ինչ անուն
 պէտք է տալ «Անահիտ»ի այս վարմունքին
 որով Բարիչ ապաստանած եւ իրեն պաշ-
 տօնակից մի քանի Հայեր Ֆրանսական կա-
 ռավարութեան մատնանիշ կ'ընէ իրբեւ զայն
 վատարանողներ եւ անոր հիւրընկալու-
 թիւնը անպատշաճօրէն գործածող . . . Տիար
 Չօպանեան իր միեւնոյն յօդուածին մէջ
 նոյնպիսի վարմունք մը ունեցած է նաեւ
 բարիզաքնակ մի ուրիշ պաշտօնակցի հետ :
 «Բանասէր»ի խմբագիր Տիար Կ. Բասմաջեա-
 նը վայրագ ուսատեաց կը յայտարարէ . . .
 այդ մարդը «Բանասէր» անուն թերթ մը կը
 հրատարակէ որ ազատ մուտք ունի Ռու-
 սիայի մէջ . Տիար Բասմաջեան անցած տարի
 ուսումնական ուղեւորութիւն մը ըրաւ
 ուսական Հայաստանի մէջ եւ նորէն այդ-
 պիսի ուղեւորութեան մը ծախքերը հողա-
 լու համար յատուկ յանձնաժողով մը հան-

զանակութիւն բացած է : Արդ ի՞նչ անուն պէտք է առնուի Զօպանեանի այս վարժարանին երբ այդ միջոցին կ'ընէ մատնանիչ ընել թէ բեւեռագէտ Բասմաշեանի վայրագ ոռւսասեցութիւնը հանրամատնութիւն է :

Մարդ կը սահմակի՝ այսքան վիժխարի անուղղամտութիւն տեսնելով այդքան անպարզ դիմ ապուշութեան միացած : Նախ, պ. Փորթնազարեան կը ստէ, եւ կամ կարգացածը հակահարու անկարող է, ըսելով որ «Ժող հա. » ի յօդուածին իմաստը փոխած եմ. ահա այդ յօդուածին խնդրոյ առարկայ եղող մասը (իմ սու վորութիւնս է, եւ միակն եմ այդ սովորութիւնը ունեցող, հակառակորդներուս գրածը ամբողջութեամբ յիշել, պատասխանելէ առաջ) :

«Պ. Տեղքասէ, իրբեւ ճայտարիմաց մարդ, տեսաւ որ ուրիշ շատ աւելի դիւրին միջոցներ չէին պակսիր իրեն. Սուլթանը լաւագոյն արամալարութեանց բերելու համար (Թուպինիի, Լորանտոյի եւ Քարափներու խնդրոյն մէջ) : Այս միջոցներն եղան տարիներէ ի վեր Պրանսական կառավարութեան գիտութիւնովն ու թոյլտուութիւնովը գործող Սուլթանին գաղանի ոստիկանութեան կազմալուծման սպառնալիքը, եւ երկրորդ հայկական հարցը ձեռք առնելու սպառնալիքը . . . Պ. Տեղքասէ կ'ընդունէր հայկական դատին ախոյեան պ. Իիէր Քիչեարը, ու նոյն օրն իսկ կառավարութեան բերան «Թան»ը կը փութար հրատարակել ասիկա իր կարեւոր լուրերու բաժնին մէջ : . . . Երբ Քրանսքոթուրք միջադէպը բողոքովին վերջնայ, երբ պ. Քոնսթան կամ իր յաջորդը Սուլթանին հետ վերսկսի իր անուշ յարաբերութիւնները, եւ իրերը շարունակեն իրենց երջանիկ ընթացքը աշխարհներուն լաւագոյնին մէջ, առ տարբերութեամբ որ քանի մը հարիւր զիակներ աւելի փոռած պիտի ըլլան հայ հողին վրայ, պիտի վերադառնանք այս խնդրոյն, եւն : »

Անվիճելի է որ «Ժող. հա. » ի խմբագիրը այս սողերուն մէջ Քրանսական կառավարութեան վերագրած է հայկական խնդիրը իր առեւտրական գործերուն, լուծմանը համար գործածելու դիտաւորութիւնը : Ուրիմն պ. Փորթնազարեան անազնութիւն մը կը գործէ ինծի վերագրելով խեղաթիւրում մը որ բացարձակապէս անգոյ է : Իսկ իր անազնութիւնը ծայրայեղութեան կը հասնի երբ կ'երեւակայէ թէ «Ժող համ. » ի այդ դատման մասին քննադատութիւնովս կը ձգտէի Քրանսական կառավարութեան արարքներուն նկատմամբ Քրանսաբնակ Հայերու կողմէ ուր է քննադատութիւն ամէն պարագայի մէջ աններելի ցոյց

աւելու եւ թէ թաքուն դիտաւորութիւնն ունէի այդ սողերովս «Ժող համ. » ին վրայ հրատարակել Քրանսական կառավարութեան կտակածները կամ բարկութիւնը () : Պրանսական կառավարութիւնը հեռու է մեր մամուլով ըզբաղելէ, եւ եթէ նոյն իսկ անոր հետեւէր, վայրենիներու երկիր մը չէ Պրանսան՝ որպէս զի Քրանսական կառավարութիւնը իր արարքները քննադատող օտարազգի մը ընթացքը դատապարտելի գտնէր : Պրանսական կառավարութեան ուր է արարքը բացարձակապատեթեամբ քննադատելու «Իրաւունքին» դէմ բառ մը, ստորակէտ մը չկայ իմ յօդուածիս մէջ, եւ չէր կրնար արդէն գոյութիւն ունենալ : Ես զիտել տուած եմ թէ «Ժող. համ. » ը անիրաւ եւ տնպատշաճ ընթացք մը կ'ունենար, զի քիւսիֆօ-քուրթի վիճար չընդունած Քրանսական կառավարութեան դիտաւորութիւններուն եւ Հայկական խնդրոյն նկատմամբ տածած զգացումներուն մասին բացարձակ կարծիք մը յայտնելով, եւ կարծիք մը խորապէս աննպաստ՝ տոանց ինքզինքը բացատրող, ապացուցանող գրական, վերջնական փաստերու : Եւ արդէն յօդուածիս մէջ կ'աւելցընէի սա սողերը, զոր չտեսած ըլլալու համար մարդ Փորթնազարեան կ'ընտելու է :

«Երբ Քրանսքոթուրք վէճը իրօք աւարտի գրամական խնդրոյն լուծումով, եթէ պ. Տեղքասէ անկից յետոյ բողոքովին անտարբեր մնայ Հայոց դատին, եթէ իրողութիւններու ջախջախիչ ապացուցումովը համազուգեակն է, այն ատեն միայն իրաւունք պիտի ունենանք իրեն համար գործածել ծանր բառեր որոնց ինքզինքն արժանի կացուցած պիտի ըլլայ, եւ այն ատեն ոչ միայն իրաւունք, այլ պարագ ունինք զանոնք գործածելու : »

«Անահիտ» ի յուշուարի թիւին մէջ, որ քանի մը օրէն կ'երեւայ, ես ալ յայտնած եմ կարծիքս պ. Տեղքասէի նոյ. 4 ճառին մասին, եւ կարծիքս հեռու է ինկարկութիւն մը ըլլալէ : Բայց հիմա իրողութիւններու բերած շօշափելի համոզումէն յետոյ է որ իլաւունք կը ճանչնամ ինծի, եւ ամենուն, քննադատել պ. Տեղքասէի ընթացքը («Իրաւունք» բառը կը գործածեմ միմիայն ի զճամտութեան տեսակէտէն նկատելով զայն՝ մարդ ուր է անհատի նրկատմամբ (ըլլայ անձ մը կամ կառավարութիւն մը, այսինքն հաւաքական անհատ մը) իրաւունք չունի հապճեպ դատաստան ընելով զայն դատապարտելու. գործուած անիրաւութիւնը աւելի ծանր կը գառնայ անշուշտ երբ մարդ հապճեպօրէն աննպաստ կարծիք մը կը յայտնէ անհատի մը կամ կառավարութեան մը մասին, որ իր նախկին արարքներովն ինք-

զինքն արժանի կացուցած է յարդուելու, հետեւաբար եւ իրեն մասին եղած դատաստաններուն մէջ աւելի ուշադրութիւն, աւելի մանրախուզութիւն գրուելուն: Պ. Տեղբասէ այն ֆրանսացի նախարարն է որ պաշտօնի դրուի անցաւ երբ Հանթթօ իր այնքան հակամարդկային որքան հակաֆրանսական քաղաքակտնութեամբ բողոքովին տկարացուցած էր Ֆրանսայի ազդեցութիւնը Արեւելքի մէջ եւ, կարելի է ըսել, ամբողջ աշխարհի մէջ. պ. Տեղբասէ բարձրացուց Ֆրանսայի վարկը, Տրէյֆրանսան խնդրոյն սէջ արդարութեան պաշտպաններուն կողմը բռնեց յստակաբար, Իտալիոյ եւ Ֆրանսայի միջեւ կապեր հաստատեց, կրեւէի խնդրոյն լուծման մէջ գլխաւոր դերը կատարեց, Չինական խնդրոյն մէջ Ֆրանսային յաջողեցաւ տալ ունկնդրուած խորհրդատուի զիրք մը, Հանթթօյի դակշիւնին յանցանքովը գոյացած Ֆաշտայի խնդրոյն հետեւանդով անպօֆրանսական պատերազմի մը վտանգին առաջն առաւ, եւ հայկական խնդրոյն մէջ ցոյց տուաւ բարի տրամադրութիւններ որոնք կարելու արդիւնք մը չեն տուած զեռանշուշտ, բայց որոնք իրաւունք կուտան իր վրայ յոյս գնելու: Այս բոլորը «Իրողութիւններ» են, զոր ո եւ է հրապարակագիր պէտք չէ հրեք անտեսէ: Ֆրանսոթութեւք վէճին միջոցին, Բրեսանսէի պէս լուրջ գրող մը «թան»ին մէջ յայտնած էր ճիշդ այն յոյսը զոր «Անահիտ»ը յայտնեց. Բրեսանսո իսկ, որ գորովալից չէ պ. Տեղբասէ ի համար, առաջուց ոչինչ չէր գուշակած եւ կանխաւ չէր դատած ու դատապարտած պ. Տեղբասէի ընթացքը, այլ կ'ըսէր որ

«Երե պայացուցուի որ պ Տեղբասէ պ. Բիյեարն ընդունած է՝ Հայոց խնդիրը շահագործելու համար միայն, այն ատեն որչափ այլանենք զինքը քիչ է:»

Այս պայմաններուն մէջ է որ «Ժող. համ.» ի դատաստանը անարդար եւ անպատշաճ երեւցաւ ինձի: անպատշաճ բառին վրայ կը շեշտեմ. մարդ շատ աւելի զգուշաւոր (զգուշաւոր վարկոտ ըսել չէ) պէտք է ըլլայ իր քննադատութեան մէջ, (խղճի պարտք մը կատարելու համար միայն) անձի մը կամ հաւաքական անձաւոր մը նկատմամբ որմէ բարիք է տեսած. այդպիսի անձի մը դէմ մարդուս ձեռքը այն ատեն միայն առաջ երթալու է աննպատ կարծիք մը յայտնել, երբ անհերքելի վերջնական փաստեր ունենայ. արդ Ֆրանսայէն մեր ընդունած բարիքը ընդհանրապէս, եւ ֆրանսական արդի կառավարութեան քանիցս մեզ նկատմամբ ցոյց տուած գործօն բարի կամեցողութիւնը պարտք կը գնեն մեր վրայ յայտուան քննադատութիւններու շաճապարել: Եւ արդէն բաց ի այս բոլոր տեսակէտներէն, «Ժող. համ.» ի այդ դատաստանը ես քննադատած էի ոչ այնքան ֆրանսական կառա-

վարութեան հանդէպ իր անիրաւութեանը համար, որչափ հայ ժողովրդին վրայ իր այդ ընթացքովն ունենալիք վնասաբեր ազդեցութեանը համար, որովհետեւ «Ժող. համ.» ի յողուածը վնասեցողիչ էր, եւ հայ թերթ մը իրաւունք չունի վնասեցնելու ժողովուրդը երբ դրական փաստեր չունի ամբողջ ժողովուրդը ոգևորող յոյս մը քանդելու համար. հիւանդ անձի մը, ինչպէս հիւանդ հաւաքականութեան մը, մեծագոյն զեղը բարոյական ուժին վաս պահպանումն է. ամէն անոնք որ ազգին խանդավառութիւնները կը թեւատեն, վնասակար կ'ըլլան անոր. եւ ասիկա պէ՛տք էր ըսել: Թերթ մը պարտք ունի միայն զգուշացնել ժողովուրդը որ իր խանդավառութիւնը անհաշիւ ու ծայրայեղ արարքներու չհասցնէ. եւ այդ խորհուրդը «Անահիտ»ը չէր մոռցած տալու:

«Ժող. համ.»ը չի կրնար ալ յաւակնիլ ըսելու թէ պիլ վարքեան արծու ետեսորահայեցութեամբ մը նախազուշակած էրդէպքերը եւ յայտնած էր կարծիք մը որուն ճիշդ ըլլալուն բացարձակապէս վստահ էր առաջուց. Իրողութիւնները շատ լաւ կրնային հակառակը ապացուցանել, եթէ ֆրանսոթուս համաձայնութիւն մը գոյացած ըլլար. Իրողութիւնները ամէն պարագայէ մէջ ապացուցին արդէն թէ պ Տեղբասէ փորձ մը ըրած է համաձայնութիւն մը գոյացնելու, եւ եթէ չէ յաջողած, ատի իրաւունք չէր տար որ առաջուց իրեն վերագրէին մեր խնդրով բնաւ չզբաղելու որոշումը: Այդ յոյսը արդէն «Ժող. համ.»էն եւ «Անահիտ»էն շատ աւելի բարձր եւրոպական թերթեր ալ յայտնեցին, եւ անշուշտ երեսնաներէ չէ որ խմբագրուած են անոնք:

Գալով պ. Բասմաջեանի խնդրոյն, ա'լ հող զուտ զաւելտի ոլորտը կը թեւակոխենք: Գրականութենէ քիչ շատ հասկցող եւ տարրական ուղղամտութենէ զուրկ չեղող ո եւ է անհատի համար, «վայրագ ոռոսատեցութիւն» քայտարութիւնը հեղնութեան տող մըն է, որ ուրիշ բան չի ձգտիր շեշտել, բայց եթէ պ. Բասմաջեանին իմ ու պ. Չերապի հանդէպ ըրուած ընթացքին հակասականութիւնը: Ոչ ոռոսատեցութիւնն էր ոչ ալ հայասիրութիւնը որ պ. Բասմաջեանը մղեց Ռուսիոյ հանրային կրթութեան նախարարին դրուած անգոյ նամակին հեքեաթը հնարելու, այլ պաշտօնակից մը անուանարկելու տարամերժ դիտաւորութիւնը: Մեծ պատիւ մը ըրած կ'ըլլայի պ. Բասմաջեանին եթէ լրջօրէն հաւատացած ըլլայի թէ քաղաքական խորին համոզմանց դրողւմովն է որ այդ պարտնը այդպիսի արարքի մը առաջնորդուեցաւ. որովհետեւ եթէ իրօք ոռոսատեաց եղած ըլլար պ. Բասմաջեան, Չարին ուղղած իր աղերսագրին մէջ «հայ եկեղեցին օրթոտոքս եկեղեցւոյն մէկ ճիւղը» համարող պ. Չերապի հետ գործակցիլ չէր շարունակեր:

թող պ. Փորթուքալեան անհող ըլլայ . նախ , այդ յօդուածս «Անահիտ»ի Ռուսաստան զըրկուած բաժնին մէջ չէր դրուած, եւ սահմանուած չէր Ռուսերէ կարգացուելու , բայց այն անհաւանական պարագային մէջ իսկ ուր ուս կառավարութիւնը մտքէն անցընէր անոր մէջ փնտոել ինչ որ չկայ հոն , պ. Բասմաջեանին համար գերադրականութիւն բաւական է պ. Չերազի աղերսագրէն յետոյ իր անոր հետ գործակցիլը ցոյց տալ ուս կառավարութեան , եւ գրկարաց պիտի ընդունուի Ռուսաստանի մէկ ծայրէն միւսը (1) :

Ինչ որ այս ամենուն մէջ տարօրինակ կը գտնեմ , եւ զզուելի , այն է թէ պ. Փորթուքալեան , որ երեսակայական վնասուածներ պաշտպանելու յանկարծական տենդէ մը բռնուեր է հիմա , իր պորտը գիտող պուտտայի երանելի հանդարտութեան մը մէջ ընկղմած մնաց երբ պ. Բասմաջեան իր բազմաթիւ արբանեակներուն հետ իմ պատուոյս գէմ դաւաճանեց , զիս ներկայացնելով հայ ժողովրդին իբրեւ գործիք մը ուս կառավարութեան :

ՀԵՐՈՍՍԱԲԱՐ ՄԵՌՆՈՂ ՀԱՅԵՐ

«Շարժում»էն կ'իմանամ որ Էտիրնէի մէջ կախուեր են երկու Հայ Դրօշակեան յեղափոխականներ , Պետրոս Սերեմճեան եւ Օննիկ Թորոսեան , երկու պուլկար յեղափոխականներու հետ : Այս չօրսը , հինգ ամսու չափ առաջ , ուրիշ հինգ վեց Հայ ու Պուլկար ընկերներու հետ , պուլկարական սահմանագլուխը գաղտնի անցած են եղեր , Էտիրնէի բանտին մէջ հեռող Մակեգոնիացի բանտարկեալները ազատելու նպատակով : Էտիրնէի մօտ պաշարուեր են թուրք զինուորներէն , որոնք խուսն բազմութեամբ յարձակած են իրենց վրայ , եւ

(1) Չեմ կրնար արգէն բացատրել զզուանքը զոր ինձի կ'ազդեն՝ պաշտօնակցի մը գիտակօն ձեռնարկին այդպիսի միջոցներով վնասելու գիտաւորութեան մը կարելիութիւնը ենթադրելով իմ մէջս : Ես Պ. Փորթուքալեանէն շատ աւելի խրախուսած եմ ա զբասմաջեանը իր գործին մէջ . անցեալ տարի ճիշդ իր Ռուսաստան գտնուած միջոցին էր որ հրատարակեցի «Անահիտ»ի մէջ «Բանասէր»ին համար համակրական ու ներբողալից յօդուած մը , իմ չափովս նպատակու համար յաջողմանը պ. Բասմաջեանի պտոյտին , որ գիտէի թէ հնարաւորական չէր միայն այլ եւ բաժանորդախուզական . բայց երկրորդ ուղեւորութիւն մը ընելու իր գիտաւորութիւնը պատճառ մը չէ վերջապէս որ ինձի նկատմամբ իր ունեցած ցած վարմունքը նշաւակելէ ետ կենամ :

երկարատեւ կատաղի պայքարէ մը յետոյ , սպաննուեր են անոնցմէ վեցը եւ բռնուեր են չորսը , Պետրոս Սերեմճեան , Օննիկ Թորոսեան , Սրիսթօիլիէֆ եւ Սեւեթօւլա Մերճանֆ , որոնք հինգ ամիս բանտին մէջ ահաւոր չարչարանքներու ենթարկուելէ յետոյ , այժմ ահա կախաղան են բարձրացուեր :

Օտար դատի մը համար է որ այդ կարիճ Հայերն իրենց կեանքը զոհեր են , բայց բոլոր Հայերը յարգանքով պիտի խոնարհին անոնց յիշատակին առջեւ , որովհետեւ իրենց փառաւոր մահովը անոնք անդամ մը եւս ու հոյակապօրէն ապացուցին թէ Հայը մարտիրոսներու ժողովուրդ մը չէ լոկ , այլ թէ հերոսներ ալ կը ծնին ան : Պուլկարիոյ բոլոր քաղաքներուն մէջ , Պուլկարներն ու Հայերը իրենց հիացումն ու ցաւը եղբայրացուցեր են ալնիւ դատի մը համար մեռնիլ յանձն առնող այդ քաջերուն հոգեհանգիստը սրտայոյզ հանդիսաւորութեամբ մը կատարելով :

Պ. Մինաս Չերազ , իր թերթին չորրորդ երեսը , ուրիշ բան չի գտներ ըսելու այդ մեծ դէպքին հանդէպ՝ բայց եթէ սա տարօրինակ չորս տողը .

«Հրապարակաւ կախեր են Էտիրնէի մէջ երկու Պուլկար եւ երկու Հայ , Պետրոս Սերեմճեան եւ Օննիկ Թորոսեան , որոնք դատապարտուած էին , անչլիական լրագիրներու ըսածին նայելով , որովհետեւ մասնակցած էին աւաղակային արարքներու՝ աւելի քաղաքական գոյն ունեցող՝ որ անցեալ ամառ գործուած էին Էտիրնէի վիլայիթին մէջ :»

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

SU.ՐԱԶ

Պատկերազարդ շաբաթաթերթ
Բաժանորդագիրն է տարեկան՝ Ռուսիոյ համար
6 րուպլի, արտասահմանի համար 13 ֆրանք:

Հասցէն՝

Tiflis. Rédaction du journal TARAZ

ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական
աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուս-
սաստանի համար՝ 4 րուպլի, արտասահմանի
համար՝ 13 ֆրանք:

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց
հասցէները մաքուր եւ անսխալ գրեն:

ԴԻՄԵԼ՝ Rédaction de la Revue «Ararat»
ETCHMIADZIN (Caucase)

ԼՈՒՄԱՅ

Գրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Բաժանորդագիրն է, երկու գրքի համար
3 րուպլի, իւրաքանչիւր գրքին առանձին՝
2 րուպլի:

Դիմել՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լուսայ»:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Երկու գրքի տարեկան բաժանորդագիրն է
3 րուպլի կամ 10 ֆրանք:

ԴԻՄԵԼ՝

Ervand Lalayantz, Séminaire Nersisizian
Tiflis, Caucase.

ԱԶԲԻԻՐ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագիրն է՝ տարեկան, Ռուսիոյ համար
3 րուպլի, արտասահմանի համար 8 ֆրանք:

Հասցէն՝

Tiflis. Rédaction de la revue AGBUR

ՀԱՆԴԵՍ

ԱՄՍՈՐԵԱՅ

ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ-Գրական յօդուածներէն զատ՝ ճշդիւ տե-
ղեկութիւն կը տրուի հայ-գրականութեան,
պատմութեան, եւ այլն նկատմամբ ամէն ամիս
երեւցած նոր հրատարակութեանց վրայ: Նոյն-
պէս քննադատական տեղեկութիւն կը տրուի
ազգային լրագրոց մէջ ապուած կարեւոր լու-
րերու վրայ:

«Ազգային լրագրաց բովանդակութիւն»,
թղթակցութիւն, ծանուցում, եւ այլն:

Խմբագրութեան ղրկուած ամէն գրքերու
վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն
տալը պիտի շարունակուի:

Մեյ հեղինակ Ընթերցողաց հաճելի նորու-
թիւն մը յուսանք պատճառել այնու որ խըմ-
բագրութեանս ուղղուած գրքերն անմիջապէս
յաջորդ ամիսն շերթիս ծածկին վրայ պիտի
հրատարակուին:

«Հանդիս»ի խմբագրութիւնը կը գնէ հայե-
րէն հին ձեռագիրներ. ձեռագրի մանրամասն
ստորագրութիւնը եւ ուղուած գիրը ծանուցա-
նել:

Բաժանորդագիրն է. արտասահմանի համար,
տանկան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք:
Ռուսիոյ համար, տարեկան 4 րուպլի. վեցամ-
սեայ 2 րուպլի 50 կոպէկ:

ԴԻՄԵԼ՝

A la Rédaction de la Revue «Hantess»
VII/2 Mechitaristengasse, 4.

VIENNE, Autriche

ԱՆՍՆՎՏԻ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),
 2 տոլար (Ամերիկա), 5 բուպլի (Ռուսիա).
 վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 բուպլի
 Ռուսիա :

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները հտ չեն դարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագիրն զրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍՆՎՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս	Պարոն	Գէորգ Մելիք-Կարազեօղեան
Պաքու . —	»	Ս. Մ. Ծոցիկեան
Գահիրէ —	»	Ա. Ա. Թորգոմեան
Ռուսճուք . —	»	Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ . —	»	Ա. Տեմիրճիպաշեան
Պուքրէշ . —	»	Արիս Լալար
Դաբէժ . —	»	Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք . —	»	Կատարեան
Բրովիտէնս . —	»	Նազարէթ Թաթէոսեան
Ֆրեզնօ . —	»	Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն .	»	Մանուկ Գալստեան
Ուոթըր . —	»	Երուանդ Յակոբեան
Չիքակօ . —	»	Ա. Կարակալուրեան
Պոսթոն . —	»	Կ. Յ. Քարակիլեան